# Ազգ
Azg

11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 216(5299)

ISSN: 1829-1651


## Դավութօղլուն չի՞ արդարացրել Ադրբեջանի հույսերը

Երբ Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուն դեկտեմբերի 5-ին Կիեւում հայտարարեց, որ մտադիր է մասնակցել Սեւծովյան տնտեսական համագործակցության անդամ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների երեւանյան գագաթաժողովին, ադրբեջանական մամուլում կարծիքներ հնչեցին, որ նա այդպիսի որոշում ընդունել է ադրբեջանցի իր պաշտոնակցի հետ «ունեցած խորհրդակցություններից հետո»:

Ակնարկվեց, որ Դավութօղլուն Մամեդյարովին հանդիպել է վերջինիս եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի «գրեթե 4 ժամ տեւած դեմ առ դեմ բանակցություններից հետո»: Ինքը՝ Մամեդյարովը, APA պաշտոնական գործակալությանն ասել էր, որ Էդվարդ Նալբանդյանի հետ «առաջին անգամ քննարկել են կոնկրետ հարցեր», բայց «չի կարող ասել, թե ինչպիսի, քանի որ կա բանակցությունների գաղտնիություն»:

Հետեւել էր Թուրքիայի ԱԳ նախարարի հայտնի հայտարարությունը «Հայաստանին մեկուսացումից դուրս բերելու ցանկության» մասին, որը «Արմենպրես»-ի հարցին ի պատասխան, փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանն արդարացիորեն բնութագրել է «սադրիչ»:

Ավելի վաղ, մինչդեռ, ադրբեջանական կողմից զգուշավոր «լավատեսություն» էր արտահայտվել, թե «հնարավոր է՝ ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը նույնպես մասնակցի ՍԾՏՀ կազմակերպության երեւանյան գագաթաժողովին, եւ չի բացառվում, որ Երեւանում կայանա Դավութօղլու-Նալբանդյան-Մամեդյարով եռակողմ հանդիպում»:

Թուրքական կողմն այդքան «լավատես» չէր, բայց Անկարայի «դիվանագիտական աղբյուրներից» Բաքվի «Զերկալո»-ի մեկնաբանին հայտնի էր դարձել, որ «Երեւանում չի բացառվում Դավութօղլու- Նալբանդյան երկկողմ հանդիպման հավանականությունը»:

Ադրբեջանի ԱԳՆ մամուլի խոսնակ Էլման Աբդուլլաեւը տեղեկացրել է, որ «Ադրբեջանը կմասնակցի ՍԾՏՀ կազմակերպության երեւանյան գագաթաժողովին»: Հարեւան երկիրը, սակայն, ներկայացված կլինի ԱԳՆ տնտեսական համագործակցության բաժնի պետ Շովգի Մեհթիզադեի մակարդակով:

Որ Ադրբեջանը Երեւան է գործուղում ԱԳՆ երկրորդական պաշտոնյայի, վկայում է, որ պաշտոնական Բաքուն լուրջ սպասելիքներ չունի Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուի «միջնորդական առաքելությունից»: Այլ կերպ ասած, Երեւանում Դավութօղլուին չեն պատրաստվում լսել ոչ հայ-թուրքական, ոչ ղարաբաղյան կարգավորման թեմայով:

Դավութօղլուն Երեւան կայցելի, եթե, իհարկե, մինչ այդ Թուրքիան այլ որոշում չընդունի, միայն իբրեւ ՍԾՏՀ կազմակերպության անդամ երկրի արտգործնախարար: Իսկ Բաքվում հույս էին փայփայում, որ «կհաջողվի ստեղծել ղարաբաղյան կարգավորման «անջատ բանակցային ձեւաչափ», որտեղ գլխավոր կլիներ Թուրքիայի դերակատարությունը»:

Ընդսմին, ակնարկվում էր, որ Թուրքիային «նման առաքելություն վերապահել է ԱՄՆ-ը՝ որպես ներկա փուլում ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի գլխավոր մոդերատոր»: Պարզվում է, Ադրբեջանում տպաmել են «չծնված տղային Արեւշատ անվանակոչել»: Իլհամ Ալիեւի վարչախումբն այնքան է կորցրել հետաքրքրությունը ՍԾՏՀ կազմակերպության հանդեպ, որ խնդրել է, որ իր փոխարեն եկող տարի այնտեղ նախագահություն ստանձնի Բուլղարիան:

Դավութօղլուն, այսպիսով, հերթական անգամ միջազգայնորեն հեղինակազրկվել է: Եվ դա կարող է ավելի ծանրացնել թուրք-ադրբեջանական առանց այն էլ ոչ այնքան անամպ հարաբերությունները:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

## Եվրոմիությունը կուտացնո՞ւմ է մոտեցումը Հայաստանին

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



**Ասոցիացման համաձայնագրի ի չիք դառնալուց հետո կարեւոր են մնացել Հայաստանի համար ցավոտ խնդիրները. ժողովրդավարություն եւ իրավունքի գերակայություն, պայքար կոռուպցիայի դեմ, մարդու իրավունքներ:**

Հայաստանը հաստատապես պատրաստվում է մտնել Մաքսային միություն, եւ որոշ հայտարարությունների համաձայն՝ փաստաթղթային հիմքը դրա համար պատրաստ կլինի արդեն մինչեւ հաջորդ տարվա փետրվար: Մինչդեռ ակնհայտ է, որ Եվրոպական միության հետ համագործակցությունից զրկվելն էլ չի մտնում հայաստանյան իշխանությունների օրակարգ, թեեւ սա այն պարագան չէ, երբ մի ձեռքով երկու ձմերուկ կարող ես բռնել: Այսինքն՝ Հայաստանն իրականում ստիպված կլինի ընտրել եւ ընտրել ոչ համատեղելի իրողությունների միջեւ:

Դեկտեմբերի 9-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում էր՝ մասնակցելու Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության 14-րդ նիստին, մինչդեռ համագործակցություն ասվածի ամենամեծ, նշանակալի եւ հեռանկարային հատվածը մնաց կեսճանապարհին՝ հաշվի առնելով չնախապատրաստված Ասոցիացման համաձայնագիրն ու դրա զգալի մասը կազմող խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտում առնչվող փաստաթուղթը:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ ԵՄ պատվիրակությունը գլխավորել են ԵՄ խորհրդի նախագահությունը ներկայացնող Լիտվայի արտաքին գործերի նախարար Լինաս Լինկյավիչուսը եւ Եվրոպական հանձնաժողովի եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

Հայաստանի արտգործնախարարի նախագահությամբ անցած նիստում քննարկվել է երկկողմ համագործակցության օրակարգը, ամփոփվել են այս տարի կատարված աշխատանքները, «Արեւելյան գործընկերություն» նախաձեռնության զարգացումները՝ Վիլնյուսի գագաթաժողովի համատեքստում, Հայաստանում իրականացվող բարեփոխումները, Եվրոպայի խորհրդում Հայաստանի նախագահությունը, այդ շրջանակներում Եվրոխորհուրդ-Եվրոմիության համագործակցությունը: Նիստին անդրադարձ է կատարվել նաեւ հարաբերությունների զարգացման նպատակով ձեռնարկվելիք քայլերին:

Ըստ Նալբանդյանի՝ Հայաստանը շարունակում է հավատարիմ մնալ ընդհանուր արժեքներին, որոնք կազմում են Եվրոմիության հետ Հայաստանի հարաբերությունների հիմքը:

Տես էջ 8

## Չինաստանն ուզում է ռազմակայան ստեղծել Լուսնի վրա



Օրերս չինական առաջին լուսնագնացի հաջող արձակումից հետո չին փորձագետները խոսում են տիեզերական նոր ծրագրերի մասին: ՉԺՀ Ազգային տիեզերական վարչությանն առընթեր Լուսնի հետազոտման կենտրոնում Սինհուա գործակալության թղթակցին ասել են, որ նախատեսվում է մինչեւ 2050 թվականը Լուսնի վրա ստեղծել հրթիռակայան:

Այնտեղից մարտական հրթիռներ եւ հետազոտական անօդաչու եւ օդաչուավոր տիեզերանավեր կարձակվեն հեռավոր եւ մերձավոր տիեզերքի յուրացման նպատակով: Այնտեղ կանցկացվեն նաեւ նոր զինատեսակների փորձարկումներ:

Ներկայումս Չինաստանը տարբեր երկրների հետ բանակցություններ է վարում Լուսնի վրա չինական բանակի ստորաբաժանումների տեղաբաշխման հնարավորության շուրջը: Անշուշտ, մինչեւ վերջնական որոշման ընդունումը դեռ պետք է անցկացվեն շատ հետազոտություններ եւ ստացվեն բազմաթիվ թույլտվություններ:

## Թուրքերը կառերեսվեն իրենց անցյալին պրոֆեսոր Վերժինե Սվազլյանի գրքի շնորհիվ

ՍԱՆԱՍԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ




Երեկ տեղի ունեցավ բանագետ, բանահավաք, ցեղասպանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազլյանի «**Հայոց ցեղասպանությունը. ականատես վերապրողների վկայություններ**» ստվարածավալ գրքի թուրքերեն տարբերակի շնորհանդեսը, որը մինչ այս լույս էր տեսել հայերեն եւ անգլերեն լեզուներով: Այն կազմվել է 700 ականատես վերապրողների վկայությունների հիման վրա: Գիրքը հրատարակվել է 1500 օրինակով:

«Հայոց ցեղասպանությունը. ականատես վերապրողների վկայություններ» գրքի անգլերեն տարբերակը թարգմանել են Տիգրան Ծուլիկյանը եւ Անահիտ Դարբինյանը, իսկ թուրքերենը՝ Տիգրան Տերողումջյանը եւ Պեսրոս Չավիքյանը:

Հայոց ցեղասպանության 100-ամյա հիշատակի առիթով գիրքը թուրքերեն Ստամբուլի «Բելգե» հրատարակչությունում հրատարակել է Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպան, առաջադեմ թուրք մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ **Ռագըփ Զարաքոլուն**, որը երեկ շնորհանդեսին մասնակցեց: Ի դեպ, Ռագըփ Զարաքոլուի կողմից Ստամբուլում հրատարակվել են նաեւ Վերժինե Սվազլյանի եւս մի քանի գրքեր, որոնցից «Մուսա Լեռան 40-ը» գրքի պատճառով Ռագըփ Զարաքոլուն բանտարկվել է, իսկ ամբողջ տպաքանակը այրել էին:

Ցավով պետք է նշենք, որ Ռագըփ Զարաքոլուն, վերադառնալով Ստամբուլ, դատի առաջ է կանգնելու, քանի որ գիրքը հրատարակվել է «Բելգե» հրատարակչությունում, որը ղեկավարում է Ռ. Զարաքոլուն:

Շնորհանդեսին ներկաներին Ռ. Զարաքոլուն ողջունեց հայերեն. «Բարեւ ձեզ, սիրելի հայրենակիցներ»:

Լրագրողների հետ զրույցում հարցին, թե չի՞ վախենում Թուրքիա վերադառնալուց, Ռագըփ Զարաքոլուն պատասխանեց. «Սա խղճի հարց է, իսկ ես չեմ կարող խղճիս դեմ գնալ»:

Տես էջ 3

# Անգլիացիներն ասում են...



Անգլիացիներն ասում են, որ չկա տարվա վատ եղանակ, կա վատ հագուստ: Հետեւաբար, օրինակ, Հայաստանում, այս օրերին, երբ ջերմաստիճանն իջավ զրոյից ներքեւ, ոչ թե վատ եղանակ է, այլ մարդիկ վատ հագուստ են կրում, քանի որ մրսում են: Բայց անգլիացիների ոչ բոլոր ասածներին է պետք անվերապահորեն համաձայնել, օրինակ, նույն անգլիացիները, Լորդերի պալատում, դեմ են, որ իրենց աշխատավարձը տասնմեկ տոկոսով բարձրանա: Հայաստանում, օրինակ, ԱԺ-ում երկրորդ ընթերցումն անցավ պետական պաշտոնյաների աշխատավարձը բարձրացնելու օրինագիծը. լավ է, ոչ միշտ ենք անգլիացիներին լսում եւ նրանց նման: Օրինակ՝ Անգլիայում, երբ նույն Լորդերի պալատում քննարկվում է մի օրինագիծ, որը ներկայացրել է կառավարությունը՝ դիտարկելով որպես առաջնահերթ, որեւէ լորդ չի լքում նիստերի դահլիճը, մասնակցում է քննարկումներին: Մեր երկրում բազմաթիվ պատգամավորներ չեն գալիս կարեւոր օրինագծեր քննարկելու օրերին, իսկ նրանցից շատերը, ովքեր գալիս են, դուրս են գնում նիստերի դահլիճից: Այս առումով պատգամավորներին չես կարող մեղադրել, քանի որ ոչ ոք մեղադրելի չէ այն բանում, որ ինքը ներկա չի գտնվել մի տեղ, որտեղ հետաքրքրական չէ:

Հետեւաբար մեր շատ պատգամավորների համար օրենսդիրի իրենց աշխատանքը առհասարակ հետաքրքրական չէ, իսկ ավելի շատերին չի հետաքրքրում, թե, օրինակ, ինչի՞ մասին է խոսում սոցապ նախարարը ԱԺ-ի ամբիոնից: Պետք է նկատենք, որ սոցապ նախարարի խոսքերը ըստ էության չեն կարեւորվում նաեւ սովորական քաղաքացի Վաղինակի համար, որն ի ծնե հաշմանդամ է եւ կառավարության առաջարկած նոր օրինագծով մի քանի հազար դրամ ամսական ավելի պետք է նպաստ ստանա: Բայց երբ սոցապ նախարարը խորհրդարանի ամբիոնից հայտարարում է. «Ցանկացած համակարգ, որպեսզի լավ աշխատի, պետք է լինեն հստակ տրամաբանական կառուցակարգային օրենքներ», քաղաքացի Վաղինակը ոչինչ չի հասկանում. հիմա ինքը պետք է ուրախանա՞, թե՞ ոչ, իսկ երբ չի հասկանում, ուրեմն՝ չի կարեւորում: Կամ երբ պատգամավոր Մանվել Բադեյանը լրագրողներին ասում է. «Արա դուք գի՞ժ եք, արա, որ փողոցում մի հատ եզդի էս հարցը տար, կհասկանայի, բայց դուք իսկականի՞ց չեք հասկանում...», ազգությամբ եզդի ՀՀ քաղաքացի Խդոն չի հասկանում, հիմա ԱԺ-ի պատգամավորն իրեն վիրավորե՞ց, թե՞ ոչ:

Կամ լրագրողներս չենք հասկանում, հիմա գի՞ժ ենք, որ լրագրող ենք, ու հենց Հայաստանում ենք լրագրող: Երեւի: Համենայն դեպս, եթե մեր խորհրդարանում հավաքվել են, ինչպես Մանվել Բադեյանն է սիրում արտահայտվել՝ «վիսոկո ինտելեկտուալներ», եւ քանի որ հիշյալ անձանց մեծամասնությունը դժգոհ է մեր աշխատանքից, ուրեմն մենք գիժ ենք, երեւի:

Գիժ ենք, որովհետեւ չենք տեսնում Հայաստանում տնտեսական աճ: Գիժ ենք, որովհետեւ Հայաստանի մայրաքաղաք ենք համարում Երեւանը, ոչ թե Գյումրին, գիժ ենք, քանի որ մեզ գիժ է անվանում ՀՀ ԱԺ պատգամավորը, գիժ ենք, քանի որ նրան չենք պատասխանում...

Եզդիները պատասխանել են: Մի խումբ եզդիներ հավաքվել էին երեկ ԱԺ-ի դիմաց ու պատգամավոր Մանվել Բադեյանի համար բերել էին նվերներ: Չենք ասի, թե ինչ, ամոթ է: Իսկ «Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղը Հայաստանում հեռարձակվում է ռուսերեն, եւ մենք չգիտենք՝ սա եւս ամո՞թ է...

Անգլիացիները նաեւ ասում են՝ «Սատանան մանրուքների մեջ է», եւ սա այն դեպքն է, որ մենք պետք է համաձայնենք անգլիացիների հետ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

## ՈՐԱԿԻ ՉԱՓԱՆԻՇ

# Հայկական դեղագործական ընկերությունը ստացավ GMP հավաստագիր

**Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ազգային դեղարտադրող «Լիկվոր» դեղագործական ընկերությանը միջոցառման շրջանակներում հանձնվել է պետական որակի ՊԱԳ (պատշաճ արտադրական գործունեություն, GMP) համապատասխանության հավաստագիր: «Ազգային դեղեր-միջազգային որակ» խորագրի ներքո երեկ տեղի ունեցած «Մարդու առողջությունը» տասներորդ ազգային գիտաբժշկական համաժողովի ժամանակ, խոսելով այս մասին, «Լիկվոր» ընկերության տնօրեն Սերգեյ Մաթեւոսյանը շնորհակալություն հայտնեց կառավարությանը՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում ցուցաբերած առարկայական օժանդակության համար, ինչը նպաստել է ընկերության հետագա զարգացմանն ու ձեռքբերումների գրանցմանը:**



**ՊԱԳ-ը բարձր տեխնոլոգիական հագեցվածություն ունեցող համակարգ է, որն ընդունված է ամբողջ աշխարհում եւ կանոնակարգում է դեղագործական արտադրական գործընթացը: Հավաստագիրը վկայում է դեղերի բարձր որակի մասին եւ անհրաժեշտ է արտադրանքի արտահանման գործընթացում: Այդ հավաստագրի ստանալու կապակցությամբ ընկերությանը շնորհավորեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:**

**ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրեն Քարեն Հիլիարդը նշեց, որ ԱՄՆ-ն ուրախ է աջակցել Հայաստանի դեղագործության ոլորտին, քանի որ այն ունի արտահանումը մեծացնելու եւ աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն: Նա տեղեկացրեց, որ ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցում է հայաստանյան հիմնական հինգ դեղագործական ընկերությունների՝ հասնելու որակի միջազգային չափորոշիչներին:**

Ա. Ս.

# 20 հազար ծառ է տնկվել ռոռոգելի տարածքներում

**Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, նոյեմբերին Երեւանում մեկնարկած աշնանային ծառատունկի հիմնական ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է: Մայրաքաղաքում ընդհանուր առմամբ տնկվել են շուրջ 20 հազար ծառ եւ 14000 թուփ: Ըստ այդմ, շուրջ 10 հազար ծառ եւ 14 հազար թուփ տնկվել են մայրաքաղաքի կանաչապատման ընկերությունների կողմից:**

**Ծառատունկն իրականացվել է բացառապես ոռոգելի տարածքներում: Տարեկան ծրագրով նախատեսված շուրջ 21 կմ ոռոգման նոր համակարգի անցկացմամբ ոռոգելի են դարձել նաեւ «Փարոս» անտառպուրակի, «Հաղթանակ» զբոսայգու եւ Կոմիտասի անվան զբոսայգու տարածքները, որտեղ եւս աշնանային ծառատունկ է իրականացվել: Երեւանը կանաչ տարածքներով համալրելու 2013 թվականի ծրագրի արդյունքում ընդհանուր առմամբ մայրաքաղաքի կանաչ մակերեսը կհասնի 850 հա-ի:**

Ա. Ս.

# Հայաստանում Իտալիան նոր դեսպան ունի



Դեկտեմբերի 10-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է Հայաստանում Իտալիայի նորանշանակ դեսպան Ջովաննի Ռիչիուլլիին՝ հավատարմագրերի պատճենի հանձնման կապակցությամբ:

Ողջունելով հյուրին՝ նախարար Նալբանդյանը նշել է, որ հայ-իտալական հարաբերությունները ունեն հազարամյակների պատմություն՝ հիշարժան փոխադարձ բարեկամության դրսեւորումներով եւ բարի ավանդույթներով: Նա հաջողություն է մաղթել դեսպանին դիվանագիտական առաքելության կատարման գործում՝ հույս հայտնելով, որ դեսպանն իր աշխատանքով կնպաստի հայ-իտալական բարեկամական փոխգործակցության ընդլայնմանը եւ խորացմանը:

Դեսպան Ռիչիուլլին, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, վստահեցրել է, որ կանի առավելագույնը հայ-իտալական համագործակցությունն ամրապնդելու եւ զարգացնելու ուղղությամբ:

Հանդիպմանը նախարար Նալբանդյանը եւ դեսպան Ռիչիուլլին քննարկել են բարձրաստիճան փոխայցելությունների կազմակերպման, միջխորհրդարանական շփումների ակտիվացման, իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, առեւտրատնտեսական կապերի խթանման, արդյունավետ, կրթամշակութային համագործակցության հետագա զարգացմանն առնչվող հարցեր, անդրադարձել նաեւ Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններին:

Վ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Եկող տարվանից Հայաստանում կգործի բյուջետային ավիաընկերություն

### *Իսկ «բաց երկնքի» քաղաքականությունը արդեն բերում է ավիատոմսերի գների էժանացման*

«Հուսով ենք, որ հաջորդ տարվա գարնանից Հայաստանում կսկսի գործել առաջին բյուջետային ավիաընկերությունը՝ Երեւանը կապելով Եվրոպայի մոտ 10 երկրների հետ», լրագրողների հետ երեկ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն Արման Խաչատրյանը: Նա նշեց, որ այդ ուղղությամբ բանակցություններ են ընթանում, եւ ինքը դեռ չի կարող հայտնել ավիաընկերության անունը:

Արման Խաչատրյանը տեղեկացրեց, որ բյուջետային ավիաընկերությունները, ընտրելով երկրորդային օդանավականներ, որոնց սակագները բարձր չեն, ինքնաթիռում նաստուցելով սահմանափակ ծառայություններ, տնտեսում են գումար եւ առաջարկում են ավելի մրցունակ գներ, քան մյուս ավիափոխադրողները:

Խոսելով Հայաստանի կառավարության կողմից ավիացիայում «բաց երկնքի քաղաքականության» անցնելու արդյունքների մասին՝ Արման Խաչատրյանը նշեց, որ դրա 3-4 տարվա ընթացքում կպահովի 1,5 տոկոս տնտեսական աճ, կստեղծվեն 20 հազար նոր աշխատատեղեր, 20-25 տոկոսով կաճեն ուղեւորափոխադրումների ծավալները, 10-50 տոկոսով կնվազեն ավիատոմսերի գները: Նրա հավաստմամբ՝ այդ քաղաքականությունն արդեն ազդել է ավիատոմսերի գների վրա: 40 տոկոսով էժանացել են Երեւան-Դուբայ ավիատոմսերի գները՝ 200 հազար դրամից դառնալով 120 հազար, նախկինում շաբաթական իրականացվող 3-4 չվերթի փոխարեն իրականացվում է 11 չվերթ: Երեւան-Մոսկվա ավիատոմսի գինը 200 հազար դրամից դարձել է 160 հազար դրամ:

Ա. Ս.

ԱԶԳ

## Անցուդարձ

# ԵՄ համաձայնագրի ձախողումը բացասաբար չի անդրադառնա հայ-բելգիական հարաբերությունների վրա

Բելգիական գործարար շրջանակներն անհամբերությամբ էին սպասում Հայաստան-ԵՄ Ասոցիացման համաձայնագրի ստորագրմանը, բայց, ինչպես ժողովրդական խոսքն է ասում՝ «աղը շուտ հասավ, քան մատաղը»: Հայաստանն ընտրեց Մաքսային միությունը: Թե որքանով իրական կլինեն նախատեսված ծրագրերի գործընթացը եւ ինչ ուղղություն կստանան, ժամանակը ցույց կտա: Այս խնդիրների պատասխանը ստանալու համար «Ազգը» Բրյուսելում հանդիպեց Բելգիա-Հայաստան առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ **Վալերի Սաֆարյանին**:



Հիշեցնենք, որ ներկայումս Հայաստանում բելգիական կապիտալով գործում են 30 կազմակերպություններ: Միայն 2012-ին Բելգիա-Հայաստան ապրանքաշրջանառությունը կազմել է 200 մլն. դոլար:

Հայաստանը երբեք չի գտնվել եւ մինչ օրս էլ չի գտնվում կայուն եւ տնտեսապես զարգացած երկրների ցանկում, ինչը կխրախուսեր եվրոպական երկրներին ներդրումներ անել Հայաստանում: Բայց բելգիական գործարար շրջանակներն արդեն մի քանի տարի առանձնակի հետաքրքրություն են դրսեւորել Հայաստանի ուղղությամբ. ինչը պայմանավորված է ոչ թե Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությամբ, այլ պարզապես սփյուռքահայերի գործուն նախաձեռնությամբ:

«Ցավով եմ ընդունում Հայաստանի հրաժարումը Ասոցիացման համաձայնագրից, հետաքրքրական է, ինչ կտա Մաքսային միությունը Հայաստանին», ընդգծեց Բելգիա-Հայաստան առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Վալերի Սաֆարյանը: Ըստ հայ գործարարի, «որքանով է ճիշտ լինել մի միության մեջ, ուր կան երկրներ, որոնք մինեւնույն միջազգային կոնվենցիայից դուրս են: Հայաստանը եթե ԵՄ-ի հետ ստորագրեր Ասոցիացման համաձայնագիրը, ապա Բելգիան Հայաստանին կդիտեր որպես տնտեսապես համագործակից երկրի: Ցավոք, Հայաստանը նախընտրեց Մաքսային միությունը, ինչը նշանակում է, որ Հայաստանը Բելգիայի համար դառնում է պարզապես արտահանման տարածք: Այս հանգամանքներում անորոշ է համագործակցությունը, քանի որ կա անհամապատասխանելիություն, ինչը թերեւս եվրոպական գործարարներին հնարավորություն է տալիս Հայաստանով անցում կատարել հարեւան երկրներ»:

Փոքր եւ միջին բիզնեսը Հայաստանում զարգացնելու ուղղությամբ մեր հայրենակիցը դեռեւս լավատես է. քանի որ, ըստ նրա, Հայաստանը բաց երկիր է, որեւէ նախարարի հետ հանդիպելը դժվար չէ, ինչը չի կարելի ասել Ռուսաստանի մասին:

Պաշտոնական տվյալներով 30 հազար հայեր են ապրում Բելգիայում, որը հայ-բելգիական հարաբերությունները զարգացնելու կարեւոր հիմք է: Եթե մինչ օրս բելգիացի գործարարներն էին հետաքրքրված Հայաստանով, ապա այսուհետեւ Բելգիա-Հայաստան առեւտրաարդյունաբերական պալատի նախաձեռնությամբ առաջին անգամ նախատեսվում է հայ գործարարներին ներկայացնել Բելգիայում,

Արդեն 10 տարուց ի վեր Բելգիայից Հայաստան պաշտոնական որեւէ այց չի եղել, ըստ Վ. Սաֆարյանի՝ առաջիկայում նախատեսվում է Բելգիայի արտգործնախարար Դիդիե Ռանդեյի այցի նախապատրաստումը Հայաստան: Կկազմակերպվեն բելգիական օրեր Հայաստանում: Բելգիահայ բռնցքամարտիկ, Եվրոպայի չեմպիոն Ալեքս Միսկիրչյանի, հայտնի դերասանուհի Բարբարա Սարաֆյանի եւ ծագումով հայ նշանավոր այլ անձանց միջոցով ներկայումս աշխատանքներ են տարվում՝ Հայաստանը ճանաչել տալ նաեւ բելգիական լայն խավերին:

Զրույցի ընթացքում մեր հայրենակիցը հաճախ էր ափսոսանքով անդրադառնում ԵՄ համաձայնագրի ձախողմանը, ըստ նրա՝ «եթե Հայաստանը ստորագրեր ԵՄ-ի հետ համաձայնագիրը, ապա եվրոպական ներդրողները մեծ վստահություն կունենային, բայց չեմ կարծում, որ սա կխանգարի հայ-բելգիական համագործակցությանը, նաեւ չեմ կարծում, որ եթե ստորագրվեր ԵՄ-ի հետ համաձայնագիրը, ապա անմիջապես խոշոր ներդրումներ կլինեին Հայաստանում: ԵՄ համաձայնագրի ստորագրումն այնքանով էր կարեւոր, որ մոնոպոլ վտանգը կվերացվեր Հայաստանում: Ռուսաստանը եւս ծայրահեղ մրցակից չի կարող լինել: Անհրաժեշտ են լուրջ մրցակիցներ, ինչը կօգնի Հայաստանին իջեցնել գները, ընդգծեց հայ գործարարը, լավատեսորեն հավելելով, որ, այսուհետեւ եւս կարվի հնարավորը՝ զարգացնելու Եվրոպա-Հայաստան հարաբերությունները:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ
Մեր հատուկ թղթակից
Բրյուսել

## ԳՅՈՒՄՐԻ

# Մեկ անօթեւան ընտանիքի բնակարանով ապահովելուն պակասում է 320-350 հազար դրամ

**Գյումրու Սբ. Յոթվերք եկեղեցու երիտասարդական «Բարեգործական ջոկատը» մոտ երկու ամիս առաջ նախաձեռնել էր «Մեկ բացիկ=մեկ բնակարան» ծրագիրը, որի էությունը հետեւյալն էր: 1988 դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի 25-ամյակի շեմին տպագրվում էր 15.000 խորհրդանշական բացիկ, որոնցից յուրաքանչյուրը քաղաքացիների ու կազմակերպությունների շրջանում 400 դրամով վաճառելով, պետք է հավաքվեր 6 մլն դրամ, այդ գումարով մինչեւ դեկտեմբերի 7-ը գնվեր մեկ բնակարան ու նվիրվեր քաղաքի երկրաշարժից անօթեւան բազմանդամ ընտանիքներից մեկին: Յուրաքանչյուր ոք, գնելով մեկ բացիկ, օգնում էր մեկ անօթեւան ընտանիքի բնակարանով ապահովելուն:**

**Անհրաժեշտ գումարը մինչեւ նախանշված օրը չհավաքվելու պատճառով ձեռնարկի հեղինակները դրա գործողության ժամկետը մեկ շաբաթով երկարացրել են: Ինչպես տեղեկացրել են կազմակերպիչները, այդ ժամանակամիջոցում բացիկների վաճառքից հավաքվել է մոտ 4 մլն 480 հազար դրամ, իսկ գոնե երկսենյականոց մեկ բնակարան գնելու համար, հաշվի առնելով Գյումրիում գործող շուկայական գները, հարկավոր է եւս 320-350 հազար դրամ:**

**Ի դեպ, բացիկների իրացումը չի սահմանափակվել միայն Գյումրիով: Մեկ ամսվա ընթացքում դրանք վաճառվել են ինչպես այստեղ, այնպես էլ հանրապետության մարզերում ու մայրաքաղաք Երեւանում: Հատկապես այս վերջինի հարցում երիտասարդների հույսերը չեն արդարացել. չնայած մայրաքաղաքային տարբեր բուհերի ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածություններին ու աջակցման տրված խոստումներին, այդ բուհեր ուղարկված 2600 բացիկներից վաճառվել է մոտ 600-ը, մնացածը հետ է վերադարձվել: Ձեռնարկի հեղինակները դրանում դիտավորություն չեն տեսնում, այլ կարծում են, որ մայրաքաղաքացիները, հեռու լինելով Գյումրիում առկա պատկերից, չգիտեն՝ ինչ բան է 25 տարի տնակում ապրելը: Գյումրիում մոտ 13.000 բացիկից չի իրացվել 1000-ը: Իսկ ընդհանուր առմամբ մոտ 10.000 մարդ է մասնակցել ձեռնարկին, գնել բացիկներ: Որոշակի թվով բացիկներ վաճառվել են Շիրակի մարզպետարանում, Գյումրու քաղաքապետարանում, մանկավարժական ինստիտուտում:**

**Մնացած բացիկների իրացման եւ անհրաժեշտ գումարի հավաքման խնդիրը երիտասարդները հույս ունեն լուծել այս մեկ շաբաթվա ընթացքում:**

Գ. Մ.

# Մահազդ

**Դեկտեմբերի 9-ին կյանքից անժամանակ հեռացավ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության Հայաստանի կազմակերպության վարչության անդամ Արտաշես (Արթուր) Բարսեղյանը:**



**Ս-Դ հնչակյան կուսակցության Հայաստանի վարչությունը խորապես ցավում է Բարսեղյանի մահվան կապակցությամբ եւ իր խորին ցավակցությունը հղում նրա ընտանիքին, կուսակցական եւ մարտական ընկերներին:**

**Արտաշես Բարսեղյանը ծնվել էր 1966 թ.-ի դեկտեմբերի 6-ին Երեւանում: Ավարտել է Գյումրու Պոլիտեխնիկական ինստիտուտը, այնուհետեւ՝ Տյումենի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ակտիվորեն մասնակցել է Արցախյան ազատամարտին, եղել հատուկ նշանակության ջոկատի հիմնադիրը:**

**Ս-Դ հնչակյան կուսակցության անդամ էր 2009 թ.-ից:**

# Թուրքերը կառերեսվեն իրենց անցյալին պրոֆեսոր Վերժինե Սվազլյանի գրքի շնորհիվ

*1-ին էջից*

«Թուրքիայի իշխանական խավը մերնմաններին միշտ ցանկացել է լռեցնել եւ նման դատական գործերը դրա ապացույցն են: Մի քանի օրից պետք է դատարանի առջեւ կանգնեմ, եւ այս գործը հարուցվել է դեռեւս երկու տարի առաջ, իսկ փոքր տղաս արդեն երկու տարի բանտում է»,- ասաց Ռ. Զարաքոլուն եւ ավելացրեց, որ Թուրքիայի համար մեծ պատիվ է հրատարակել նման գիրք, որի վրա կես դարի աշխատանք է տարվել. «Թուրք հասարակությանը ամենամեծ ասելիքն այս գրքում է գրված՝ պարզ, ժողովրդական վկայություններ, որոնք ապրել են այդ ամենը: Յուրաքանչյուր ոք, ով կարդա գիրքը, կտեսնի իր գավառը, եղելությունը եւ կառերեսվի իր ծնողների, պապերի հետ»,- ասաց Ռագըբ Զարաքոլուն:




Մեծ մտավորականը նշեց, որ իրենք հրատարակել են նաեւ բժիշկ Իվ Թեռնոնի «1915 թ. մարտին» գիրքը, որը հենց Վատիկանում գտնվող պետական արխիվի եւ ականատեսների վկայությունների հիման վրա է ստեղծվել: Ի դեպ, բժիշկ Իվ Թեռնոնը իր գիտական թեզը գրել է այդ թեմայի հիման վրա. «Դոկտորին բոլորը ծաղրում էին, ասելով՝ դու ի՞նչ բժիշկ ես, եւ նա ապացուցեց, որ կարող է նաեւ պատմության դոկտոր դառնալ»:

Գրքի հեղինակ **Վերժինե Սվազլյանը** նշեց, որ այս գրքի թուրքերեն տարբերակը շատ կարեւոր է թուրքերի համար, որ եթե վաղը Նյուրնբերգ լինի, ապա այս վկայությունները վառ ապացույցներ կլինեն. «Ռ. Զարաքոլուն թուրքական «Զարափ» թերթին տված հարցազրույցում ասել է, որ սա ոչ միայն հայ ժողովրդի պատմությունն է, այլեւ՝ թուրքերի, սա մեր պատմությունն է»: Վ. Սվազլյանը այս գործը շատ է կարեւորում, քանի որ 1987 թ. «Բելգե» հրատարակչությունը տարբեր բնույթի գրքեր է տպագրել, սակայն նման գիրք դեռ չի հրատարակվել, սա իսկապես երեւույթ է Թուրքիայի մշակութային եւ քաղաքական կյանքում. «Ռ. Զարաքոլուն ասաց, որ այս գիրքը պետք է նվիրի Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին»:

Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանն** իր հերթին նշեց. «Ամեն հայ իր գոյությունով ապացուցում է, որ այդ հրեշավոր հանցագործությունը նպատակին չհասավ: Այս աշխատությունը շուրջ կես դարի պատմություն ունի, եւ սա թուրքական հասարակությանը հնարավորություն է տալիս ծանոթանալու մազապուրծ եղած ականատեսների վկայություններին: Վստահ եմ, որ այս գործից հետո Թուրքիայում կավելանան այն մարդկանց թիվը, որոնք կընդունեն եւ կդատապարտեն ցեղասպանությունը: Այս աշխատությունը դեռ երկար ճանապարհ է անցնելու»:

# Մի՛ վաճառվեք ու վաճառեք մեր ապագան 30 արծաթով՝ «գենդերացավով» տառապողնե՛ր

«Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու եւ «գենդեր» եզրույթը օրենքից հանելու մասին բազմիցս խոսվեց, ինչպես նաեւ փոփոխություն կատարվեց, բայց՝ մասնակի:

Այդ ընթացքում սկսվեց շարժում՝ ոտքի ելան «Համահայկական ծնողական կոմիտեն», Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը եւ այլք ու մինչեւ այժմ պայքարում են:

Թե ի՞նչ է թաքնված այդ եզրույթի ենթատեքստում, շատերը չգիտեն: Օրերս տեղի ունեցավ համաժողով, որին մասնակցեցին ինչպես քաղաքական գործիչներ, այնպես էլ 40-ից ավելի հասարակական կազմակերպություններ ու մտահոգ անձինք:

Ազգային արժեհամակարգ. անցյալը, ներկան ու ապագան, ահա այս խորագիրն էր կրում համաժողովը:

«Համահայկական ծնողական կոմիտեի» նախագահ Արման Բոշյանը նախ անդրադարձավ վերջերս տեղի ունեցած խժդժություններին. «ԱՄՆ դեսպանատունը եւ մի շարք կառույցներ մոտ մեկ շաբաթ առաջ համատեղ հայտարարությամբ իրենց վճռականությունը հայտնեցին այս հարցի շուրջը, իսկ ես ցանկանում եմ հիշեցնել այդ միջազգային կառույցներին, որ իրենք Հայաստանում ընդամենը հյուր են եւ իրավունք չունեն խառնվելու Հայաստանի ներքին գործերին»:

Անդրադառնալով մայիսի 20-ին ընդունված օրենքին՝ Ա. Բոշյանը ներկայացրեց մի քանի վիճահարույց կետեր, որոնց լայն հանրությունը տեղյակ չէ. «Նախ՝ սա մի խայտառակ օրենք է, որը պարտադրում է պետբյուջեի հաշվին այլասերվածություն տարածել Հայաստանում, եւ մենք հարկեր ենք վճարում, որ այլասերումը տարածվի: Երկրորդ՝ մենք պաշտոնական հարցում ուղարկեցինք նախարարություններին, եւ պարզվեց, որ մինչեւ ընդունվելը 5 նախարարությունների կողմից այս օրենքը մերժվել է, հատկապես կտրուկ մերժել է արդարադատության նախարարությունը, իսկ թե ինչպիսի՞ հիմնավորում է տվել կառավարությունը այս օրենքը կյանքի կոչելուն, մեջբերեմ. «Եվրոպական ինտեգրման գործընթացը, եվրոպական լիարժեք ինտեգրումն անկասկած թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր իշխանության մակարդակներով գենդերային հավասարության առաջմղման գործընթացի խթանումն է»:

Բոշյանը մանրամասնեց նաեւ, թե ի՞նչ է սպասվում այդ օրենքի ընդունումից հետո՝ այլ երկրների օրինակով. «Գենդերային օրենքից հետո ընդունվում են միասեռական ամուսնությունների օրինականացումը, յուվենալ արդարադատությունը, կրթական համակարգում սեռական դաստիարակության անվան տակ այլասերման քարոզչության ապահովումը: Հիմա մեջբերեմ եվրոպական սեքսուալ կրթության ստանդարտների՝ պաշտոնական փաստաթղթից մի դրույթ, թե ի՞նչ է սովորեցվում 4-6 տարեկան երեխաներին. «Սեփական սեռական օրգանների մանրամասն ծանոթություն, մաստուրբացիա, գենդերային ինքնության ամրապնդում եւ կողմնորոշում, սեքսի մասին զրույցներ»: Սա պաշտոնական փաստաթղթի այն մասն է, որն ուղղված է 4-6 տարեկան երեխաների կրթությանը: Ահա սա է ուղղված մեր երեխաների դեմ»:



Ի դեպ, «Համահայկական ծնողական կոմիտեն» ուսումնասիրել է նաեւ սոցիալական նախարարության աշխատանքը գենդերի օրենքի վրա, նշեց Ա. Բոշյանը. «Ուսումնասիրելուց հետո պարզեցինք, որ Ղրղզստանի 2008 թվականին ընդունած օրենքը, մեղմ ասած, շատ նման է Հայաստանի՝ 2013 թ. ընդունված օրենքին: Ավելին, կարող ենք ասել, որ մեկը մյուսի թարգմանությունն է, տարբերությունը 7,5 տոկոս է: Հայաստանում օրենքի վրա աշխատանքը տեւել է 3 տարի, եւ ահա այդ երեք տարվա արդյունքը: Ես թարգմանեցի Ղրղզստանի օրենքը, այդ ողջ աշխատանքը ինձնից խլեց եւս երեք, բայց՝ ժամ: Ի դեպ, տարեկան տեքստի մշակման վրա, ըստ պաշտոնական տվյալների, ծախսվել է 3 միլիոն դրամ»: Ա. Բոշյանը ցավով փաստեց, որ օրենքում կա հինգ հոդված, որոնք արգելում են գործող մշակույթը, մասնավորապես մեր մշակույթը ու տղամարդու եւ կնոջ տարբերությունը ընդգծող երեւույթը համարում են կարծրատիպ, այդ կարծրատիպերի գովազդումը եթերում խստիվ արգելվում է: Կորցնում ենք մեր մշակույթը, քանի որ օրենքը իր հինգ կետերով արգելում է ավանդական մշակույթը եւ պարտադրում է հանրահռչակել «գենդերային մշակույթ», որը ենթադրում է գեյ շքերթներ եւ այլն:

«Կառավարությունը պնդում է, որ այս օրենքը պետք է Հայաստանին, քանի որ ԱՊՀ երկրները եւս ընդունել են, որը եւս չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանն, Ալբանիան, Լիտվան, Լատվիան, Լեհաստանը ընդունել են հակառակ օրենքներ՝ ընդդեմ գենդերի»,- ասաց Ա. Բոշյանը:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ **Արամ Սարգսյանն «Ազգի»** հետ զրույցում ասաց. «Նախ մենք սկսեցինք հասկանալ, թե ի՞նչ են նշանակում «գենդեր» եւ «գենդերային հավասարություն» հասկացությունները, եզրույթները: ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների հանձնակատարը ձեւակերպել է այլ իմաստով, եւ ոչ այն կերպ, ինչպես մեզ է հրամցվում: Գենդերի իմաստը ՄԱԿ-ի կողմից տրված է հետեւյալ կերպ. «Գենդերային ինքնությունը վերաբերում է յուրաքանչյուրի ներքին եւ անհատական զգացմանը, որը կարող է համընկնել կամ չհամընկնել ծննդյան պահին արձանագրված սեռի հետ, այդ թվում՝ սեփական մարմնի ինքնազգացմանը, որը ազատ ընտրության դեպքում կարող է ներառել տեսքի կամ ձեւի փոփոխությունները՝ դեղորայքի, վիրաբուժության կամ այլ միջոցներով, եւ գենդերի այլ դրսեւորումներով, այդ թվում՝ հագուստի, խոսքի, պահվածքի միջոցով: Ինչո՞ւ է Հայաստանում ներկայացվում որպես սոցիալական փոխհարաբերություն կանանց եւ տղամարդկանց միջեւ: Մենք պահանջում ենք, որ չեղյալ հայտարարվի այս օրենքը, կամ փոփոխություն կատարվի»:

Ա. Սարգսյանը ցավով նշեց, որ այս եզրույթով դուռ է բացվում մյուս օրենքների համար՝ խտրականության դեմ եւ յուվենալ արդարադատության, որոնք վտանգավոր են մեր ազգային արժեհամակարգի համար. «Մենք դիմեցինք ԱԺ նախագահին, խմբակցությունների ղեկավարներին՝ առաջարկելով վերանայել եւ օրենքը մաքրել «գենդեր» եզրույթից եւ ձեւակերպել հայերեն լեզվով: Սակայն պարզվեց՝ այնպիսի ջատագովներ կան այդ եզրույթի՝ թե՛ ներսում, թե՛ դրսում, որ միանգամից մեծ բանակ ձեւավորեցին եւ աղմուկ բարձրացրին: Գործը հասավ նրան, որ միջազգային կառույցները սկսեցին միջամտել, վերջին պահը եղավ, որ ՄԱԿ-ի գրասենյակը, ԵԱՀԿ-ը, ԱՄՆ-ի դեսպանությունը հատուկ հայտարարությամբ հանդես եկան ի պաշտպանություն ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի հայտարարության»:

Մանրամասնենք, թե ինչ է նշանակում յուվենալ արդարադատություն. եթե ծնողի ինչ-որ քայլ երեխայի կարծիքով իր իրավունքների սահմանափակում է, ապա երեխան կարող է զանգահարել ոստիկանություն կամ համապատասխան մարմինների, որպեսզի իր իրավունքները վերականգնվեն: Ըստ օրենքի՝ համապատասխան մարմինները իրավունք ունեն այդ երեխային վերցնելու այդ ընտանիքից՝ հանձնել մանկատուն կամ մի այլ ընտանիքի, որն իրենց կարծիքով պարկեշտ է: Դրանք բացահայտ ռազմավարական քայլեր են՝ քայքայելու հայ ընտանիքը, օջախը ներսից:

**Կոմիտաս վարդապետ Հովնանյանն «Ազգի»** հետ զրույցում ասաց, թե ինչ վտանգներ են սպառնում ազգին, մեր արժեքներին, եթե կիրառվի «գենդերի» օրենքը. «Եթե ժողովուրդը չունի իր ընդհանուր հետաքրքրությունների առանցքը, չունի իր արժեհամակարգի նկատմամբ գիտակցություն, նվիրվածություն, չի կարող ազգ կոչվել, կլինի ամբոխ: Մենք այսօր ցանկանում ենք ասել, որ երեկ մենք ազգ էինք, իսկ այսօր չենք ցանկանում ամբոխի վերածվել, այլ պահենք հազարամյակներից եկող ազգային արժեհամակարգը, մեր ազգային դեմքը, դիմագիծը: Ինչքան էլ դրսից փորձեն մեզ աղավաղել, եթե մենք կարողանանք ազգային գիտակցությամբ վահանակալվել, ոչ ոք մեզ չի կարող որեւէ կերպ վնաս հասցնել: Ես կարծում եմ՝ մեր հիմնական խնդիրն է, որ մենք կորցրել ենք մեր ազգային գիտակցությունը, պատկանելության նկատմամբ ունեցած նվիրաբերումը եւ ամենակարեւորը՝ մեր ազգային արժեքների սրբության գիտակցությունը, որովհետեւ ազգային արժեքը պատահականորեն հայտնված երեւույթ չէ, այլ անցնում է հազարամյակների մաղով եւ զտվելուց հետո է փոխանցվում սերունդներին», եւ ավելացրեց. «Մենք, դժբախտաբար, ինչ-ինչ երեւույթների տուրք տալով, այս արժեքներից ենք երես թեքում: Եթե պետությունը միատարր է, ապա պետք է իր արմատները արմատավորի իր ազգային հողի վրա: Ես մեծ գնահատանքով եմ նայում արեւմտյան արժեքներին, սակայն կան արժեքներ, որոնք չափազանցության մեջ ոչ թե ծառայում են հօգուտ ժողովրդի, այլ նպաստում են հավաքականության պառակտմանը»:

Տեր Կոմիտասը, անդրադառնալով յուվենալ արդարադատության նպատակին, ասաց. «Իբր թե երեխաներին ազատություն տալու անվան տակ ընտանիքում ցանկանում են քաոս ձեւավորել, քանի որ այդ տարիքում երեխան չի կարողանա ինքը զատորոշել՝ ո՞րն է հօգուտ ընտանիք հասկացության, եւ ո՞րն է հօգուտ իր մանկական կամայականությունների: Հնարավորություն տալով երեխային՝ իր կամայականությունները պարտադրելու ընտանիքին, միայն ընտանիքն են քանդում, ուրիշ ոչինչ»:

Տեր Կոմիտասը շատ հակիրճ տվեց նաեւ բոլորիս հարցերի պատասխանը, ինչո՞ւ է այսօր մեր երկրի վիճակն այսպես, եւ ո՞վքեր են մեղավորները. «Մենք սիրում ենք քարկոծել մեր կառավարությանը: Սակայն ովքեր են այսօր մեր կառավարության ներկայացուցիչները՝ մեր եղբայրը, որդին, ազգականը: Սա նշանակում է, ինչպես մենք երեկ դաստիարակել ենք նրանց, դրա արդյունքներն ենք քաղում, քանի որ տոսողը ծառից հեռու չի ընկնում: Այսօր պետք է մեր զավակներին դաստիարակենք այնպես, որ վաղը պաշտոնի անցնելուց հետո ազգային տականք չդառնան»:

Համաժողովի վերջում մասնակիցները համախմբվեցին հետեւյալ գաղափարների շուրջը, որ արժեհամակարգը ազգի հարատեւման, աշխարհընկալման, բարոյական եւ գեղագիտական պահանջներին համապատասխան՝ դարերով մշակված, հասարակական կյանքը եւ վարքը կարգավորող խոր եւ անբեկանելի պատկերացումների ու պայմանավորվածությունների միագումարն է:

Ազգը զարգացող օրգանիզմ է: Հայ ազգի հարատեւումն ապահովել են հետեւյալ գործոնները. լեզուն, մշակույթը, հավատքը, պատմական հիշողությունը, ինքնագիտակցությունը, հոգեկերտվածքը, ավանդույթները, սովորույթները եւ այլն: Ազգի ինքնության պահպանման անհրաժեշտ գործոնները կրողն ու սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Հետեւաբար՝ ընտանիքը ազգի, հասարակության, պետության կորիզն է: Ազգային արժեհամակարգի հրամայականն է՝ ժողովրդի անվտանգ, ապահով ու երջանիկ կյանքի ապահովումը սեփական հողում, ինչը ներառում է հոգեւոր, մտավոր ու գործնական ներդաշնակությամբ արտահայտված խաղաղ եւ արգասաբեր հարատեւություն, երբ մարդն ապրում է սեփական հողի վրա ընտանիքի, գերդաստանի, սոցիալական միջավայրի, պետության սահմանած կարգուկանոնի եւ սահմանադրական նորմերի հետ համերաշխ: Ազգային արժեհամակարգն ազգի հարատեւման հիմնասյունն է, որի համակցված ենթահամակարգերն են՝ ընտանիքը՝ իր ավանդույթներով, պետության ու պաշտպանության ենթահամակարգը՝ իր ավանդույթներով, մշակույթը, կրթությունն ու գիտությունը՝ իրենց բաղադրիչներով:

Հանդիպման ընթացքում Գեւորգ սրբազանը կարդաց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ուղերձը, եղան նաեւ այլ ելույթներ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Միջազգային

# Բարձրակարգ հյուրանոցներ եւ խավիարային դիվանագիտություն

## Ինչպե՞ս են Ադրբեջանում սիրաշահում օտարազգի խորհրդարանականներին

***Ստորեւ թարգմանաբար եւ հատվածաբար ներկայացնում ենք անգլիական «Գարդիան» թերթում տպագրված Ջեյմի Դովարդի եւ Շառլոտ Լաշմերի հոդվածը, որն արտատպել է «Արմինյըն-Միրոր Սփեքթեյթըր» շաբաթաթերթը նոյեմբերի 30-ի համարում։***

«Հանկոք» անկախ առեւտրական կազմակերպությունը գործում է առաջնակարգ Մեյֆեր հասցեում եւ շքեղ ճաշկերույթներով պատվում է տարբեր կուսակցությունների քաղաքագետներին։ Անկախ առեւտրական կազմակերպություն հորջորջված «Ադրբեջանա-եվրոպական ընկերությունը» կանոնավոր հաճախականությամբ եվրոպական եւ այլ երկրների խորհրդարանականների եւ կառավարական պաշտոնյաների համար կազմակերպում է շրջագայություններ դեպի նախկին Խորհրդային Միության հանրապետություններ, որտեղ հարգարժան հյուրերը իջեւանում են բարձրակարգ հյուրանոցներում։

Բաքու այցելող Եվրախորհրդի անդամները արքայական վերաբերմունքի են արժանանում։ Նրանցից մեկի փոխանցմամբ. «Դրանք իսկական արձակուրդներ են, որոնց ընկերակցում են նաեւ թանկարժեք նվերներ, մեծ մասամբ մետաքսյա թանկարժեք գորգեր, ոսկյա կամ արծաթյա իրեր, խմիչքներ, խավիար եւ փող։ Բաքվում ամենասովորական նվերը երկու կիլոգրամ խավիարն է»։

Բայց մարդու իրավունքների պաշտպանների կարծիքով՝ վերոնշյալ ընկերության «խավիարային դիվանագիտությունը» նպատակ ունի սոսկ բարձրացնելու աշխարհի ամենաինքնակալ երկրներից մեկի հեղինակությունը հատկապես ներկա ժամանակներում, երբ այն չափազանց վարկաբեկված է ընտրախախտումների եւ ընդդիմադիր կուսակցությունների ու լրագրողների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքի պնդումներով։

Ընկերությանը մեղադրում են երկրի էլիտար ընտանիքների խոսափող լինելու համար, որոնց ձեռքերում են կուտակված նավթի եւ հանքարդյունաբերության տարբեր ճյուղերի շահաբաժինները։ Ընկերության նախագահն է Թալե Հեյդարովը, լոնդոնաբնակ որդին Քեմալեդդին Հեյդարովի, որը արտակարգ իրադարձությունների նախարարն է, նախագահ Իլհամ Ալիեւի մտերիմը եւ, ըստ ոմանց, Ադրբեջանի ամենաազդեցիկ անձնավորությունը։ «Արտաքնապես Թեասը (Teas) անկախ կազմակերպություն է, բայց այն փաստը, որ Թալե Հեյդարովն է դրա նախագահը, հարցեր է առաջ քաշում այդ ընկերության անաչառության եւ նպատակների վերաբերյալ», նշում է «Գլոբալ Ուիթնես» խմբավորումից Թոմ Մեյնը։

Ընկերությունն առնվազն 71.740 ֆունտ ստեռլինգ է ծախսել կուսակցության անդամների՝ Ադրբեջանում շրջագայությունների վրա, նաեւ 9.700 ֆունտ ստեռլինգ՝ Լեյբորիստական կուսակցության անդամների հյուրընկալությունների վրա։ Ադրբեջանը՝ «Տրանսփերընսի ինտերնեյշընլ» կազմակերպության կողմից ճանաչված է որպես աշխարհի ամենակոռումպացված երկիրը։

2011-ի մայիսին այդ ընկերության ծախսերով խորհրդարանականներից եւ լորդերից կազմված մի պատվիրակություն հինգ օրով այցելեց Ադրբեջան։ Դրանից անկախ, նույն տարում, բարոնուհի Էքլյանսն ու դերկոմս Էքլսը, որոնք Եվրախորհրդի պառլամենտական ասամբլեայի (PACE) անդամ են, նույնպես ընկերության ծախսերով այցելեցին Ադրբեջան։ PACE-ն, ի դեպ, Ադբեջանի ընտրությունները վերահսկող կազմակերպություն է։

Ավելորդ է նշել, որ նման չնաշխարհիկ ընդունելություններ կազմակերպվում են երկրի առաջին ընտանիքների իմացությամբ։ Համաձայն ամերիկյան դեսպանատնից դուրս թափանցած մի հաղորդագրության՝ «ենթադրվում է, որ առաջին տիկին Մեհրիբան Ալիեւան էական պլաստիկ վիրահատության է ենթարկվել արտասահմանում։ Նա եւ իր երկու դուստրերը 2008-ի սեպտեմբերին հյուրընկալվել են ԱՄՆ-ի երկրորդ տիկին Լին Չեյնին։ Նախքան նրա ժամանելը թիկնապահներից մեկը հարցրել է կամացուկ, թե երեքից ո՞րն է մայրը։ Դեսպանատան աշխատակիցներից մեկը որոշ ժամանակ մտածելուց հետո ասել է, թե տրամաբանական տարբերակով երեւի մեջտեղում կանգնողն է երկու դուստրերի մայրը»։

Արքայազն Էնդրուն Ադրբեջան հաճախակի այցելուներից մեկն է։ Իսկ անցյալ տարի վարչապետ Կամերոնը Ալիեւին ընդունեց Դաունինգ սթրիթի իր ռեզիդենցիայում։

Ընկերությունը ազդեցիկ հարաբերություններ ունի նաեւ Մեծ Բրիտանիայի գործարար շրջանակներում։ Նրա կազմակերպությամբ անցյալ ամիս բարձրակարգ առեւտրական մի կոնֆերանս անցկացվեց՝ խթանելու բրիտանական ներդրումները Ադրբեջանում։

Բայց մեկնաբանները հարց են առաջ քաշում, թե Բրիտանիան այդ երկրի մարդու իրավունքների հարցերո՞վ պետք է զբաղվի, թե՞ նավթային ծառայություններով։

«Ադրբեջանի կառավարությունը զբաղված է այլախոհությունը սահմանափակելու միտումնավոր եւ վիրավորական մարտավարությամբ», նշված է սեպտեմբերին հրապարակված «Հյումըն Ռայթս Ուոչի» զեկույցում։ «Միջազգային համաներում» կազմակերպությունը կոչ է արել Ադրբեջանի իշխանություններին՝ վերջ տալ խոսքի ազատության իրավունքի դեմ գնալուն, այն բանից հետո, երբ մի լրագրող եւ մի գրող բանտարկվել էին կառավարությանը քննադատելու մեղադրանքով։

PACE պատվիրակության մաս կազմող բրիտանացի խորհրդարանականները, որոնք վերահսկել են Ալիեւի երրորդ նախագահական ընտրարշավը, հասկանալի պատճառներով համաձայն չեն նման ձեւակերպումներին։

**ՀԻՆ ՊԱՐՏՔԵՐ**

# Մոսկվան չեղյալ է ճանաչել Կուբայի պարտքի 90 տոկոսը

**Ռուսաստանը եւ Կուբան այս տարվա հոկտեմբերին ստորագրել են մինչեւ օրս չհրապարակված համաձայնագիր, որը չեղյալ է ճանաչում ԽՍՀՄ-ին Կուբայի 32 մլրդ դոլար պարտքի 90 տոկոսը։**

**ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը դեռ փետրվարին ստորագրել էր նախնական պայմանագիր Կուբայի եւ ԽՍՀՄ-ի պարտքային հարցի կարգավորման վերաբերյալ, հարց, որը քսան տարի վիճելի թեմա էր եղել Մոսկվա-Հավանա հարաբերություններում, նշում է bfm.ru կայքը։ Վերջնական փաստաթղթով նախատեսվում է, որ Կուբան առաջիկա 10 տարում պետք է վճարի 2,3 մլրդ եվրո, իսկ Մոսկվան պետք է դուրս գրի մնացյալ քսանմեկ միլիարդը։**

**Կուբան 1980-ականների վերջերին դարձավ անվճարունակ, սակայն տարեկան 13 մլրդ եվրո արտահանական եկամուտներ ունեցող այդ երկիրը ներկայումս ջանում է իր պարտավորությունները վերաձեւակերպել միջազգային շուկաներում վստահություն ձեռք բերելու նպատակով։**

# Սկսվեց դաշնային պետության երկնքի համատեղ մարտական հերթապահությունը



Բելառուսի եւ Ռուսաստանի զինվորական օդաչուները դեկտեմբերի 10-ից սկսել են դաշնային պետության օդային տարածքի համատեղ մարտական հերթապահություն, որն իրականացվում է երկու երկրների հակաօդային պաշտպանության միասնական շրջանային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված համաձայնությունների շրջանակներում։ Այդ մասին հաղորդում է Բելառուսի պաշտպանության նախարարությունը։

Ռուսական կողմից առայժմ մասնակցում է CY-27կ տիպի չորս կործանիչ, որոնք Բելառուսում տեղաբաշխվել են Բարանովիչի քաղաքի 61-րդ ավիաբազայի օդանավակայանում։ Բելառուսի ռազմական գերատեսչությունում ընդգծում են, որ արեւմտյան ուղղությամբ երկրի օդային տարածքն այսուհետեւ ավելի ապահով կլինի։

Ռուսաստանը փաստորեն ձեռնամուխ է եղել Բելառուսի տարածքում մարտական ավիագնդի ձեւավորմանը, նշում է «Ռոսիյսկա գազետա» թերթը։ Բարանովիչի օդանավակայան եկած ռուսական չորս կործանիչները Բելառուսում որոշ ժամանակ մարտական հերթապահություն կիրականացնեն տեղացի զինվորական օդաչուների հետ, բայց հետագայում ռուսական ռազմօդանավերի խումբը կվերաճի լիարժեք ավիագնդի։

Բելառուս են եկել նաեւ ռուսաստանցի ինժեներատեխնիկական աշխատողներ։ Սակայն Մոսկվայում եւ Մինսկում առայժմ չեն ասում, թե ընդամենը որքան ավիատեխնիկա եւ քանի մարդ կտեղափոխվեն Բելառուս։

Վերջնականապես հայտնի չէ նաեւ ռուսական զորաբաժնի կարգավիճակը հարեւան պետության տարածքում։ Նման զորաբաժնի ստեղծման ծրագրերի մասին հայտարարել էր ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն ապրիլին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հանդիպման ժամանակ։

Պ. Ք.

# Պենտագոնը 2014 թ. 173 մլն դոլար կհատկացնի ամերիկա-իսրայելական նախագծերին

ԱՄՆ Կոնգրեսում քննարկման դրված 2014 թ. պաշտպանական բյուջեն, չնայած ընդհանուր կրճատումներին, նախատեսում է ավելացնել հակահրթիռային պաշտպանության ոլորտի ամերիկա-իսրայելական մշակումներին հատկացվող միջոցները։ Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը։

Հակահրթիռային պաշտպանության դաշնային գործակալության ընդհանուր բյուջեն կավելացվի 358 մլն դոլարով եւ կհասցվի 9,5 մլրդ դոլարի։ Միջոցների մի մասը կուղղվի ԿԺԴՀ-ի կամ Իրանի հնարավոր հարձակումից պաշտպանող նոր ռադարի գնմանը, ինչպես նաեւ ամերիկյան մի շարք ուրիշ նախագծերի։

173 մլն դոլար կավելացվի ամերիկա-իսրայելական նախագծերին։ Մասնավորապես հավելյալ 55 մլն դոլար կստանան «Իսրայելի ավիացիոն արդյունաբերություն» եւ «Բոինգ» կոնցեռնները հակահրթիռային պաշտպանության «Խեց-2» համակարգի արդիականացման եւ «Խեց-3» համակարգի փորձարկումների համար։



Եվս 117,2 մլն դոլար կստանան Rafael եւ Raytheon կոնցեռնները «Դավթի պարսատիկ» հակաօդային պաշտպանության համակարգ մշակելու համար։

Ռոյթերի տվյալներով, կոնգրեսականները հակաօդային պաշտպանության բյուջեի շրջանակներից դուրս նաեւ հավանություն են տվել նախագահ Բարաք Օբամայի խնդրանքին՝ Իսրայելի համար 220 մլն դոլարով գնել հակաօդային պաշտպանության «Երկաթյա գմբեթ» համակարգի հավելյալ մարտկոցներ։ Այդ գումարից դուրս Կոնգրեսը 15 մլն դոլար է ավելացրել ԱՄՆ-ում «Երկաթյա գմբեթի» արտադրության նյութական բազա ստեղծելու համար։

Հակաօդային պաշտպանության բյուջեի նախագիծը նաեւ արգելում է հակաօդային պաշտպանության չինական համակարգերի ինտեգրումը ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության ցանցին։ Տվյալ արգելքը Թուրքիային կարող է ստիպել հրաժարվել չինական զենքի գնումներից։

Պ. Ք.

# Պատանի նոր տաղանդներ

Հոգեպարար երեկոյթ էր ներկայ գտնուիլ Դեկտեմբեր 1-ին Նիւ Եորքի Գարնըկի Հոլի «Ուէյլ» համերգասրահը, ուր 5րդ յաջորդական տարին ըլլալով ամերիկահայ պատանի տաղանդներ կը մասնակցէին երաժշտական աւարտական մրցանքին: Անոնք իրենց տաղանդովը կը ներկայանային հանրութեան: Պատանի ուժեր, որոնք պիտի դառնան վաղուան հպարտութիւնը մեր դարաւոր ազգային ժառանգութեան:

Տոքթ. Սվետլանա Ամիրխանեանի գլխաւորած «Ուղիղ օգնութիւն հայութեան» խմբաւորումին նախաձեռնութիւնն էր այս ամէնամեայ համերգը, որուն ցարդ մասնակցած են 300–է աւելի պատանիներ՝ երգով թէ երաժշտական գործիքով: Աննախանձ ու հետեւողական աշխատանքի արքասիքն է անկասկած տարուէ-տարի յաջողութիւն արձանագրած այս օգտակար ծրագիրը:

Թէեւ գործադիր մարմինը կը բաղկանայ երեք հոգիէ՝ ներառելով Մարինա Պաղտասարովան ու Անժելա Քազարեանը, սակայն ունի պատուոյ մարմին մը, ուր բոլորուած են ամերիկահայ ծանօթ արուեստագէտներ, բարերարներ ու ազգայիններ՝ Լուսին Ամարա, Յասմիկ Աբրահամեան, Շահան Արծրունի, Նայիրի Չեքոսքի-Պալեան, Ռիթա Պալեան, Զարմինէ Պօղոսեան, Հրանդ Կիւլեան, Կարէն Կակոսեան, Կիլտա Քիւբելեան, Արտեմիս Նազարեան, դեսպան Կարէն Նազարեան, Հերի Թուֆայեան եւ Յակոբ Վարդիվառեան: Այս մարմնին կողքին կայ դատական յանձնախումբ մը:

Այս տարուան համերգը նուիրուած էր անմահանուն Արամ Խաչատուրեանին, անոր ծննդեան 110-ամեակին առթիւ: Հայ ժողովուրդին պարծանքը եղող Խաչատուրեան կրցաւ հայ երաժշտութիւնը լսելի դարձնել մեծագոյն համերգասրահներու բեմերէն եւ ձայնասփիւռի կայաններէն: Անոր գործերը կը պահեն երէկի իրենց նո՛յն թարմութիւնը եւ արդէն վարպետը անցած է մեծ դասականներու մեծ ընտանիքէն ներս:

10 տարեկանէն մինչեւ 18 տարեկան հայ պատանիներու կողքին մասնակցեցան նաեւ ոչ հայ (իտալացի, քորէացի, ռուս, իրլանտացի, լիբանանցի ծնունդով) տաղանդաւոր ուժեր, որոնք նուագեցին Խաչատուրեանի գործերէն (Նիքօ Քարերա՝ «Լեզգինկա»ն, Անսել Չանկ՝ «Վալսը՝ Ջօ Փիան-Չոտուրի՝ «Տանգ», Իրեն Վիլկորին՝ «Տոկատա) եւ երգեցին ժողովրդական «Աղբիւրի մօտ»՝ Ճուլիա Գամինկ: Մայքըլ Խուրի սքանչելիօրէն ու ապրումով դաշնամուրի վրայ նուագեց ամերիկեան ջազային երաժշտութենէն ի մի բերուած ստեղծագործութիւն մը:

Բայց, այս բոլորով մէկ պէտք է յիշել մասնաւորաբար Դաւիթ Անթապեանը, որ սքանչացուց ներկաները Խաչատուրեանի «Սոնատա»ով, Անի Մուրատեանը՝ Բաբաջանեանի «Տոկատինա»ով, Լուսին Միսայէլեանը՝ Կոմիտասի «Կռունկ»ով, Յայկ Յովսէփեանը՝ Սարդարեանի «Հայկական էսքիզներ»ով, Մարինա եւ Իվա Քազարեանները Քոհլերի «Դիը Ունդերըր»ով եւ դեռ աւելի երիտասարդները՝ Ալին եւ Նիքոլ Խրիմեանները, Վահէ Մուրատեանը, Ամալիա Շահինեանը, Դաւիթ Յովհաննիսեանը ...:

Ջութակահար Դիանա Վասիլեանի ղեկավարութեամբ պատանի ջութակահարները՝ եօթը հոգի, ներկայացուցին Օֆենբախի «Կանկան»ը եւ Բաբաջանեանի «Յիշատակներ»ը, զարմացնելով ներկաները:

Տօնական օրերու նուէր մըն էր, որ մեզի նուիրեցին մեր նորահաս տաղանդները: Այդ մթնոլորտով ալ հաւաքուած ներկաները, անգամ մը եւս հոգեպէս հարստացած, վերադարձան տուն:

Մեր ժողովուրդը, հայրենիքէն մղոններ հեռու, կը շարունակէ պահել իր ազգային մշակութային արժէքները: Ինչո՞ւ անոնք հո՛ս «օտարեւամայի ճամբէքի վրայ» կ՛ապրին արդեօք:

Մե՜ղք մեր գրուած տաղանդներուն:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

# Ծնունդով հայ Գրիգոր Վերներն՝ առաջին անգամ հայկական բեմում

Արամ Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի շրջանակներում օրերս տեղի ունեցավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի համերգը, որի մեներգիչներն էին՝ Մարինա Նաչկեբիան (սոպրանո, Վրաստան) եւ Գրիգոր Վերները (բարիտոն, Ռուսաստան): Երեկոյի ընթացքում հնչեցին ինչպես նախերգանքներ, այնպես էլ արիաներ իտալական եւ ռուսական հանրահայտ օպերաներից



Անդրադառնալով մեներգիչներին, հարկ է նշել, որ Գրիգոր Վերները ծնունդով Երեւանից է, այժմ ապրում է Սանկտ Պետերբուրգում, Մարիինյան թատրոնի մենակատարներից է:

«Շատ լավ երաժիշտներ կան Հայաստանում եւ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի անդամները երիտասարդ լինելով հանդերձ՝ շատ տաղանդավոր են: Ինձ համար շատ հաճելի էր նրանց հետ աշխատելը»,- նշեց Գրիգոր Վերները:

Վերջին անգամ երաժիշտը Երեւանում եղել է 2002 թվականին, սակայն հայաստանյան հանդիսատեսի համար ելույթ է ունենում առաջին անգամ:

Իսկ Մարինա Նաչկեբիան նշեց, որ այս տարվա ամռանը դարձել է «Ռիկարդո Զանդոնայի» օպերային մրցույթի (Ռիվա դել Գարդա, Իտալիա) երրորդ մրցանակի եւ «Արամ Խաչատրյան» հատուկ մրցանակի դափնեկիր: Երգչուհին նշեց, որ ուրախ կլինի կրկին հանդես գալ հայաստանյան հանդիսատեսի առջեւ:

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, անդրադառնալով խաչատրյանական տարվա շրջանակներում երիտասարդական նվագախմբի կատարած աշխատանքներին, նշեց, որ իրենք հասել են նրան, որ աշխարհում մեծ ճանաչում ունեցող մենակատարներ սկսել են կատարել Խաչատրյանի գործերը, մասնավորապես, նրանցից մեկը Եղիսաբեթ թագուհու անվ. ջութակահարների միջազգային մրցույթի հաղթող, անվանի ջութակահար Անդրեյ Բարանովն է, ով նոյեմբերի 24-ին Մոսկվայում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ ներկայացրեց Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Սերգեյ Սմբատյանն ընդգծեց, որ այն երեկոները, որ 2013-ին նվիրվեցին հայ մեծ կոմպոզիտորին, շատ քիչ են, դրանք կշարունակվեն նաեւ հետագայում:

Ս. Հ.

# Երիտասարդական նվագախմբի անսամբլային կազմը կներկայանա «Ճանապարհորդություն դեպի Չեխիա» նախագծով

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի անսամբլային կազմը հանդիսատեսին կներկայանա «Ճանապարհորդություն դեպի Չեխիա» նախագծով: Անսամբլը դեկտեմբերի 11-ին ելույթ կունենա «Գաֆեսճյան» արվեստի կենտրոնում: Ինչպես փոխանցում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով նվագախմբի պաշտոնական կայքը, համերգի ընթացքում կհնչեն չեխ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Նախագիծն իրականացվում է ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության դեսպանության հովանու ներքո:

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

# Մեկնարկում է «Web Ծիրան» համահայկական 3-րդ օնլայն կինոփառատոնը

**Արդեն երրորդ անգամ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը եւ Webtv.am մշակութային ինտերնետ հեռուստատեսությունը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր հովանավորությամբ սկսում են «Web Ծիրան» համահայկական օնլայն կինոփառատոնը:**

**«Web Ծիրան» 3-րդ համահայկական օնլայն կինոփառատոնը մեկնարկեց երեկ եւ կավարտվի 2014 թ. փետրվարի 23-ին:**

**Սահմանված է 1 գլխավոր եւ 2 խրախուսական մրցանակ:**

**Գլխավոր մրցանակակիրը կպարգեւատրվի 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով եւ հատուկ դիպլոմով:**

**Խրախուսական մրցանակակիրները կպարգեւատրվեն հատուկ դիպլոմով:**

**Ինչպես գլխավոր, այնպես էլ խրախուսական մրցանակակիրները կստանան նաեւ 10 օր անվճար պրոֆեսիոնալ նկարահանող տեխնիկայից օգտվելու հնարավորություն:**

**Ամենաշատ դիտումներ արձանագրած ֆիլմը կարժանանա «Համակրանք» խրախուսական մրցանակին եւ հատուկ դիպլոմի:**

**«Web Ծիրան» 3-րդ համահայկական օնլայն կինոփառատոնի արդյունքները կհրապարակվեն 2014 թ. փետրվարի 25-ից մարտի 5 ընկած ժամանակահատվածում, հատուկ մրցանակաբաշխության ժամանակ:**

**Արդյունքները կամփոփի պրոֆեսիոնալ ժյուրին:**

**«Web Ծիրան» 3-րդ համահայկական օնլայն կինոփառատոնին ներկայացված ֆիլմերը ցուցադրվելու են բացառապես webtv.am հայկական մշակութային ինտերնետ հեռուստատեսությամբ:**

**«Web Ծիրան» համահայկական 3-րդ կինոփառատոնին կարող են ներկայացվել մինչեւ 30 րոպե տեւողությամբ ֆիլմեր՝ առանց ժանրային սահմանափակումների՝ խաղարկային, վավերագրական, անիմացիոն եւ այլն: Ֆիմերը «Web Ծիրան» համահայկական 3-րդ կինոփառատոնում ընդգրկելու համար պետք է ներկայացնել DVD ֆորմատով՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի գրասենյակ, 2013 թ. դեկտեմբերի 3-ից մինչեւ 2014թ. հունվարի 25-ն ընկած ժամանակահատվածում:**

**Գրասենյակի հասցեն՝ Երեւան 0001, Մոսկովյան 3, հեռ. +374 10 52 10 42**

**Ֆիլմերը «Web Ծիրան» համահայկական 3-րդ կինոփառատոնին ներկայացնող հեղինակները դրանով հավաստում են, որ դրանց ցուցադրման հեղինակային իրավունքների խնդիրների համար «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը եւ webtv.am հայկական մշակութային ինտերնետ հեռուստատեսությունը պատասխանատու չեն:**

**Լրացուցիչ մանրամասների համար զանգահարել. «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի գրասենյակ + (374 10) 52 10 42 կամ webtv.am հեռուստաընկերություն՝+ (37491) 27 07 76**

**«Web Ծիրան» համահայկական 3-րդ կինոփառատոնն այս տարի ներկայացնում է նաեւ «Web Ծիրան». ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ » ծրագիրը:**

**Ծրագրում ցուցադրելու համար կարող են ներկայացվել միայն բջջային հեռախոսներով, պլանշետներով, սմարտֆոններով նկարահանված կարճ ֆիլմեր, որոնք կցուցադրվեն ինչպես կինոփառատոնի, այնպես էլ webtv.am հայկական մշակութային ինտերնետ հեռուստատեսության ֆեյսբուքյան պաշտոնական էջերում:**

**Այս տեխնիկական միջոցներով նկարահանված ֆիլմերը կամ դրանց հղումները որեւէ վիդեոհոստինգային պորտալում, հեղինակները կարող են ուղարկել info@webtv.am էլեկտրոնային հասցեին՝ նշելով ֆիլմի անվանումը, հեղինակի մասին համառոտ տվյալներ, գործող բջջային հեռախոսահամար եւ գրավոր հավաստում, որ ֆիլմն ուղարկված է հեղինակի կողմից, որի համար ֆիլմի հեղինակը պատասխանատու է:**

**Ամենաշատ հավանումների արժանացած ֆիլմը կարժանանա հատուկ մրցանակի:**

# Արարատ Ղուկասյանը փնտրտուքների ճանապարհին



**Օրերս Մոսկվայում լույս է տեսել Արարատ Ղուկասյանի «Փնտրտուքների ճանապարհին» բանաստեղծությունների ժողովածուն: Այն ընդգրկում է հեղինակի ավելի քան 40 բանաստեղծություններ՝ նրա ստեղծագործությունների մի փոքրիկ երկաքաղ:**

**1000 տպաքանակով լույս տեսած ժողովածուն Ա. Ղուկասյանի առաջին գիրքն է, որը տպագրվել է Մոսկվայի «Ջավախք» միության ներկայացուցիչ Մարտիկ Գասպարյանի անմիջական հովանավորությամբ:**

**«Փնտրտուքների ճանապարհին» ժողովածուն ծնունդ է առել բանաստեղծի մտերիմ ընկեր, գրող, լրագրող եւ բժիշկ Ալեքսանդր Սոսնովսկու բարեկամական հորդորներից:**

**Մասնագիտությամբ պատմաբան Արարատ Ղուկասյանը ներկայումս բնակվում է Իսպանիայի Վալենսիա քաղաքում, ուր շուրջ 10 տարի առաջ հիմնադրել է «Արարատ» հայկական միությունը, կիրակնօրյա հայկական դպրոց եւ հիմնադրել «Հայրենիք» շաբաթաթերթը: Նրա ջանքերով զետեղվեց Իսպանիայում Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին հուշարձանը՝ Զիվան Միրզոյանի «Կենաց խաչ» հուշարձանը: Զ. Միրզոյանը, ի դեպ, գրքի նկարների հեղինակն է:**



**«Փնտրտուքների ճանապարհին» գրքի շնորհանդեսներ տեղի կունենան Մոսկվայում, Իսպանիայում եւ Հայաստանում, որոնց մասին նախօրոք կտեղեկացվի լրատվամիջոցներին:**

# Յուրա Մովսիսյանը ՌԴ աշնանային հատվածի լավագույն ֆուտբոլիստ



Ռուսական «Սպորտ-Էքսպրեսն» ամփոփելով ՌԴ պրեմիեր լիգայի աշնանային հատվածում ֆուտբոլիստների ելույթները, կազմել է առաջնության խորհրդանշական հավաքականը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տուրում իր կողմից ֆուտբոլիստներին տրված գնահատականները:

Այդ ցանկում ընդգրկվել է նաեւ Մոսկվայի «Սպարտակի» եւ ՀՀ հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը: Ի դեպ, նա արժանացել է բոլորից բարձր գնահատականին՝ 6,28:

«Մովսիսյանն աշնանային հատվածում բավականին բարձր արդյունավետություն ցույց տվեց՝ 2 գոլ խփելով ՀՀ հավաքականի կազմում, 10 անգամ աչքի ընկնելով ՌԴ առաջնությունում: Եվ դա այն դեպքում, երբ առաջնության կեսից նա խաղում էր վնասվածքներով ու հայտնի էր, որ պետք է վիրահատվի: Սակայն դա նրան չխանգարեց ցավազրկող ներարկումներով հեթտրիկի հեղինակ դառնալ «Զենիթի» հետ խաղում: Մովսիսյանը ոչ միայն աչքի էր ընկնում գոլերով, այլեւ օգնում էր թիմակիցներին պաշտպանությունում», գրել է թերթը:

## Հրաձիգներն ավարտեցին մրցաշրջանը



**Երեւանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցում տեղի ունեցավ այդ մարզադպրոցի բաց առաջնությունը: Խաղարկվող մեդալները վիճարկեցին 4 մարզադպրոցների 62 հրաձիգներ: Հաղթողները պարգեւատրվեցին մեդալներով, դիպլոմներով եւ հուշանվերներով, նրանց մարզիչները՝ դրամական պարգեւներով, իսկ մասնակից սկսնակ մարզիկները՝ հուշագավաթներով:**

**Իրեն լավագույն կողմերով դրսեւորեց հատկապես Ռազմիկ Մինասյանը, որը հաղթող ճանաչվեց 2 վարժությունում՝ վազող թիրախ, 10 մետր, 30+30 կրակոց եւ վազող թիրախ՝ խառը վազք, 10 մետր, 2x20 կրակոց: Նշենք, որ առաջին վարժությունն օդամղիչ հրացանից էր, 2-րդը՝ օդամղիչ ատրճանակից:**

**Օդամղիչ հրացանից 10 մետր, 60 կրակոց մրցաձեւում 587 միավորով առաջին տեղը գրավեց Սուրեն Բալյանը: Նրան ընդամենը մեկ միավոր զիջեց Հրաչ Բաբայանը: Աղջիկները նույն վարժությունում 40 կրակոց կատարեցին: Այստեղ ամենադիպուկը Սուսաննա Հովհաննիսյանն էր:**

**Վազող թիրախ, 10 մետր, 20+20 կրակոց վարժությունում ոսկե մեդալի արժանացավ Աննա Հակոբյանը, որը վաստակեց 347 միավոր:**

**Օդամղիչ ատրճանակով 10 մետր, 60 կրակոց վարժությունում բոլորին գերազանցեց Ռոմիկ Վարդումյանը: Աղջիկները նույն վարժությունում 40 կրակոց կատարեցին: Լավագույնը Մարիամ Խաչատրյանն էր: Իսկ վազող թիրախ՝ խառը վազք, 10 մետր, 2x20 կրակոց մրցաձեւում ամենադիպուկը Լաուրա Ավետիսյանն էր, որը վաստակեց 332 միավոր:**

## Արման Երեմյանը կպայքարի օլիմպիական ուղեգրի համար

**Դեկտեմբերի 13-15-ը անգլիական Մանչեսթր քաղաքում կանցկացվի թաեքվոնդոյի Գրան պրիի խաղարկությունը, որին անհատապես հրավիրվում են մասնակցելու միայն իրենց քաշային կարգերում բարձր վարկանիշ ունեցող մարզիկները: Ստուգապեսի մասնակից 250 ուժեղագույն թաեքվոնդոյիստների թվում կլինի նաեւ հայկական թաեքվոնդոյի առաջատար, Լոնդոնի օլիմպիական խաղերում 5-րդ տեղը գրաված Արման Երեմյանը: Մինչեւ 80 կգ քաշային մարզիկն իր մարզիչ Վարդան Վարդանյանի գլխավորությամբ, ՀԱՕԿ-ի աջակցությամբ մասնակցել է Իրանում, Ֆրանսիայում եւ Մեքսիկայում կազմակերպված ուսումնամարզական հավաքներին՝ փորձամրցումներ անցկացնելով մի շարք ուժեղագույն թաեքվոնդոյիստների հետ:**

**Արման Երեմյանը ներկայումս իր քաշային կարգում վարկանիշային աղյուսակում 16-րդն տեղն է զբաղեցնում: Հիշեցնենք, որ լավագույն 6 վարկանիշ ունեցողները մեխանիկորեն օլիմպիական խաղերի ուղեգրեր են նվաճում:**

**Մանչեսթրում կայանալիք մրցաշարը նաեւ վարկանիշային է, ուստի այն շատ կարեւոր է Երեմյանի համար: Հայ մարզիկն իր առջեւ խնդիր է դրել հաջող մրցելույթների շնորհիվ տեղ զբաղեցնել լավագույն վեցյակում: Այս տարվա հուլիսին նա շատ հաջող հանդես եկավ Մեքսիկայի Պուեբլո քաղաքում ընթացած աշխարհի առաջնությունում, որտեղ շատ մոտ էր 2016-ի օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճելուն:**

**Հիշեցնենք, որ Արմանը 2008-ի Եվրոպայի չեմպիոնն է, Ունիվերսիադայի եռակի բրոնզե մեդալակիր (2005, 2007, 2009-ին):**

## «Ալաշկերտը» մտադիր է համալրվել ազգային հավաքականի ֆուտբոլիստներով

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության հետնապահ «Ալաշկերտի» ղեկավարությունը մտադիր է ձմռանը զգալիորեն ուժեղացնել թիմի կազմը՝ հրավիրելով նաեւ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստների: Մասնավորապես, չի բացառվում, որ գարնանը թիմի դարպասը պաշտպանի Գեւորգ Կասպարովը: Վերջինս խզել է պայմանագիրն Իրանի «Զոբ Ահանի» հետ եւ այժմ ազատ ֆուտբոլիստի կարգավիճակում է: Ճիշտ է, «Արարատի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանն էլ նշել էր, որ ուրախ կլիներ իր թիմում տեսնել Կասպարովին:**

## Ռեկորդային գումար Նոյերի համար

**Անգլիական «Մանչեսթր Սիթին» պատրաստ է Մյունխենի «Բավարիայի» եւ Գերմանիայի ազգային հավաքականի դարպասապահ Մանուել Նոյերի համար ռեկորդային՝ 40 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Նոյերն անգլիական թիմում շաբաթական 125 հազար եվրո աշխատավարձ կստանա՝ դառնալով աշխարհում ամենաբարձր վարձատրվող դարպասապահը:**

**Առայժմ «Բավարիան» չի արձագանքել: Նոյերը թիմի հետ մինչեւ 2016-ը պայմանագիր ունի կնքած:**

ՇԱԽՄԱՏ

## Կարեն Մովսիսյանը նվաճեց գլխավոր մրցանակը

**Պերուի մայրաքաղաք Լիմայում անցկացված շախմատի մրցաշարում հիանալի հանդես եկավ գրոսմայստեր Կարեն Մովսիսյանը, որը 9 հնարավորից վաստակած 7 միավորով նվաճեց գլխավոր մրցանակը: Կարենը մնաց անպարտելի՝ տոնելով 5 հաղթանակ, 4 պարտիա ավարտելով ոչ-ոքի: Նա հաղթեց Ֆրանկո Մամանին, Ռոդրիգո Մենդոզային, Էդվին Կոնդորիին, Վալենտին Օսվալդոյին եւ Դանիել Ուրիբեին:**

**2-րդ տեղը գրաված պերուացի Վիլիամ Էսպինոզան Մովսիսյանից հետ մնաց կես միավորով:**

## Լեւոն Արոնյանը տարին կեզրափակի Պեկինում



**Լեւոն Արոնյանը կմասնակցի վաղը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում մեկնարկող համաշխարհային մտավոր խաղերի ծրագրով անցկացվելիք շախմատի մրցումներին: Մասնակիցներն իրենց հարաբերությունները կպարզեն արագ, կայծակնային եւ բասկյան համակարգով շախմատի մրցաշարերում:**

**Դեկտեմբերի 12-ին կկայանան արագ շախմատի մրցաշարի առաջին 4 տուրերը, հաջորդ օրը տեղի կունենան ավարտական 3 տուրերի հանդիպումները: Դեկտեմբերի 14-16-ը կանցկացվի կայծակնային մրցաշարը 30 տուրով: Մրցումները կավարտվեն դեկտեմբերի 18-ին, երբ կկայանան բասկյան համակարգով մրցաշարի ավարտական 4-րդ եւ 5-րդ տուրերը:**

**Մրցաշարին կմասնակցեն 16 շախմատիստներ: Լեւոն Արոնյանը կմրցի Սերգեյ Կարյակինի, Ալեքսանդր Գրիշչուկի, Շահրիյար Մամեդյարովի, Պերես Լեյնիեր Դոմինգուեսի, Ռուսլան Պոնոմարյովի, Թեյմուր Ռաջաբովի, Լե Քուան Լիեմի, Վան Հաոյի, Վան Յուեի, Յան Նեպոմնյաշչու, Մաքսիմ Վաշիե-Լագրավի, Գատա Կամսկու, Պետեր Լեկոյի, Վասիլի Իվանչուկի եւ Անիշ Գիրիի հետ:**

## Ղարամյանը 2-րդ հաղթանակը տոնեց

Լոնդոնի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Տիգրան Ղարամյանը հաղթեց ավստրիացի Յորգ Ժեզլին եւ վաստակեց 2,5 միավոր: 3-ական միավորով աղյուսակը գլխավորում են 10 շախմատիստներ:

## Սամվել Տեր-Սահակյանը հետապնդում է առաջատարին

**Հնդկաստանում անցկացվող շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Սամվել Տեր-Սահակյանը ոչ-ոքի խաղաց Յացեկ Ստոպայի հետ: Նա 4 միավորով հետապնդում է ուզբեկ Մարատ Ջումաեւին, որը 4,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը:**

**3,5-ական միավոր են վաստակել Հովիկ Հայրապետյանը, Լեւոն Բաբուջյանը եւ Վահե Բաղդասարյանը: Հայրապետյանն ու Բաբուջյանը միմյանց հետ հաշտություն կնքեցին, իսկ Վահեն հաղթեց Վիկրամջիթ Սինգհին: 2,5 միավոր ունեցող Մարիա Գեւորգյանը պարտվեց Մարի Գոմեսին: Պարտություն կրեց նաեւ Տիգրան Ս. Պետրոսյանը, որի մրցակիցը Դեպ Սենգուպտան էր: Տիգրանն ունի 2,5 միավոր:**

## «Ոսկե գնդակի» 3 հավակնորդները

**Ավարտվեց «Ոսկե գնդակի» հավակնորդների քվեարկության վերջնաժամկետը: Ամփոփելով քվեարկության արդյունքները, ՖԻՖԱ-ն հրապարակել է ամենաշատ միավորներ վաստակած 3 թեկնածուների ցանկը: Նրանք են Մյունխենի «Բավարիայի» ֆրանսիացի հարձակվող Ֆրանկ Ռիբերին, Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի կիսապաշտպան Ռոնալդուն եւ «Բարսելոնի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին: «Ոսկե գնդակի» նոր տերը հայտնի կդառնա 2014-ի հունվարի 13-ին Ցյուրիխում կայանալիք մրցանակաբաշխության ժամանակ:**

## Կլոպը հավակնում է տարվա լավագույն մարզչի տիտղոսին

**ՖԻՖԱ-ն հրապարակել է նաեւ տարվա լավագույն մարզչի կոչմանը հավակնող 3 մարզիչների ցանկը: Նրանցից մեկը Դորտմունդի «Բորուսիայի» գլխավոր մարզիչ Յուրգեն Կլոպն է, որի գլխավորությամբ գերմանական ակումբն այս տարվա մայիսին հանդես եկավ չեմպիոնների լիգայի եզրափակիչում՝ պարտվելով Մյունխենի «Բավարիային»: Վերջինիս նախկին մարզիչ Յուպ Հայնկեսը եւս հավակնում է լավագույնի տիտղոսին:**

**3-րդ հավակնորդը «Մանչեսթր Յունայթեդի» գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնն է, որը երկար տարիներ գլխավորում էր թիմը: Նա նախորդ առաջնության ավարտից հետո ավարտեց մարզչական իր բեղմնավոր գործունեությունը:**

## Քննարկվել է Կասիլյասի տրանսֆերի հարցը

**Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը հանդիպել է Արաբական Միացյալ Էմիրությունների փոխվարչապետ, անգլիական «Մանչեսթր Սիթիի» սեփականատեր Մանսուր Բին Զաիդ ալ Նախայանի հետ: Կողմերը քննարկել են «Ռեալի» եւ Իսպանիայի հավաքականի դարպասապահ Իկեր Կասիլյասի հնարավոր տրանսֆերի հարցը: Անգլիական ակումբի գլխավոր մարզիչ Մանուել Պելեգրինին հետաքրքրված է 32-ամյա Կասիլյասով: Վերջինս կորցրել է իր տեղը «Ռեալի» հիմնական կազմում՝ հանդես գալով միայն չեմպիոնների լիգայի խաղերում:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Եվրոմիությունը կոշտացնո՞ւմ է մոտեցումը Հայաստանին

*1-ին էջից*

**«Հիմնվելով վերջին տարիներին համատեղ ձեռք բերված արդյունքների եւ առաջընթացի վրա, մենք ցանկանում ենք զարգացնել ԵՄ-ի հետ գործընկերությունը բոլոր հնարավոր ոլորտներում, ինչն արտացոլված է Վիլնյուսյան գագաթաժողովի՝ Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ Համատեղ հայտարարության մեջ, ինչպես նաեւ բարձր ներկայացուցիչ Էշթոնի հետ մեր փոխանակած նամակներում», նշել է Նալբանդյանը։**

**Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի խոսքերով, ժողովրդավարական հաստատությունների ամրապնդումը եւ դատական համակարգի կատարելագործումը, մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության խթանումը, արդյունավետ կառավարումը, կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստան-Եվրոպական միություն ընդհանուր օրակարգի կարեւոր բաղադրիչներն են, եւ ԵՄ-ի շարունակական աջակցությունը կարող է գործիք հանդիսանալ՝ Հայաստանում բարեփոխումների գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով։**

**Նալբանդյանը հիշեցրել է, որ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման եւ ռեադմիսիայի մասին ԵՄ-ի հետ կնքած համաձայնագրերը անցել են վավերացման գործընթացը եւ ուժի մեջ կմտնեն 2014թ. հունվարից։ Պարզվում է ավելին. Հայաստանը ակնկալում է մեկնարկել Եվրոմիության հետ համապատասխան գործընթաց՝ մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման վերաբերյալ, որը հնարավորություն կտա ապագայում հասնել Հայաստանի քաղաքացիների համար մուտքի արտոնագրային ռեժիմի վերացմանը։**

**Միեւնույն ժամանակ կարեւորվել է Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրին կից արձանագրության ստորագրումը, որը հնարավորություն է ընձեռում Հայաստանին՝ մասնակցելու ԵՄ ծրագրերի լայն շրջանակի եւ համագործակցելու ԵՄ տարբեր գործակալությունների հետ։ Հայաստանը նաեւ շահագրգիռ է ԵՄ-ի հետ խորացնել ոլորտային համագործակցությունը, քայլեր ձեռնարկել առավել բարենպաստ միջավայրի կայացման համար՝ ներդրումների խրախուսման եւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնման նպատակով։**

**Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրությամբ, որ մատուցվել է «ԵՄ-Հայաստան. նոր համատեքստ՝ գործընկերությունն առաջ տանելու նույն վճռականությամբ» վերտառությամբ, տեղեկացվում է, որ հանդիպմանը հաջորդած մամուլի ասուլիսում եվրոհանձնակատար Ֆյուլեն այս հանդիպումը տարբեր է որակել նախորդների համեմատությամբ՝ քննարկումների բովանդակության առումով՝ ելնելով Հայաստանի միջազգային նոր հանձնառություններից։ «Այն, ինչ նույնն է մնացել, մեր ցանկությունն ու վճռականությունն է՝ շարունակել սերտ հարաբերություններ ունենալ եւ դրանք առաջ տանել արդեն իսկ ձեռք բերվածի հիման վրա», ասել է Ֆյուլեն։**

**Նրա խոսքերով՝ Եվրոմիությունը վերահաստատել է երկկողմ հարաբերությունների հիմքերը վերանայելու անհրաժեշտությունը, որը փաստացի կնշանակի թարմացնել Հայաստան-ԵՄ եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների պլանը։ ԵՄ-ը, միեւնույն ժամանակ, ողջունելով արդեն իսկ արված բարեփոխումները, խրախուսել է՝ ավելացնել ջանքերը որոշակի ոլորտներում, մասնավորապես՝ ժողովրդավարություն եւ իրավունքի գերակայություն, պայքար կոռուպցիայի դեմ, մարդու իրավունքներ եւ հիմնարար ազատություններ, բարեփոխումներ արդարադատության ոլորտում։**

**Ֆյուլեի մատուցմամբ՝ ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր բովանդակությունն ուրվագծվել է, մնում է սկսել աշխատել այն դարձնել իրականություն։ «Հայաստանը կարող է հենվել ԵՄ-ի շարունակական աջակցության վրա՝ քաղաքական, տնտեսական եւ սոցիալական բարեփոխումների ու մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության բարելավման հարցում», նշել է Ֆյուլեն, ընդգծելով, որ դեկտեմբերի 9-ի հանդիպմանը հատուկ ընդգծում է արվել քաղաքացիական հասարակության դերակատարության առումով։**

**Այս համատեքստում էլ հատուկ աջակցություն կտրամադրվի Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի հայկական ազգային պլատֆորմին՝ հզորացնելու պլատֆորմի դերն ու բարեփոխումների մոնիտորինգը։ «Կառավարությանը կոչ ենք անում ապահովել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մարդու իրավունքների, մասնավորապես կանանց իրավունքների ակտիվիստների որեւէ ահաբեկում չլինի», շեշտել է Ֆյուլեն՝ հավելելով, որ այդպիսի ահաբեկումների որոշ օրինակներ պետք է հետաքննվեն, ահաբեկիչներն էլ կանգնեն դատարանի առաջ։**

**Կարելի է ասել, որ չնայած Հայաստանի հետ մեղմ են վարվել, բայց չեն մոռացել անդրադառնալ հայկական իրականության համար ցավոտ թեմաներին, շեշտադրմամբ, որ Եվրոմիությունն այսուհետեւ այդ հարցերում առավել կոշտ կարող է գտնվել, իսկ ԵՄ-ի նման մոտեցումն, իր հերթին, կարող է առավել մեծ ակտիվության հիմք դառնալ նույն ակտիվիստների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար։**

# Շնորհավո՜ր Ամանոր, իմ նոր ընկեր

**Սիրելի երիտասարդներ**

Համաշխարհային հայկական կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան (ՀՀԿ ԵԿԱ) շարունակում է իրագործել արդեն բարի ավանդույթ դարձած «Շնորհավո՜ր Ամանոր, իմ նոր ընկեր» Համահայկական երիտասարդական ծրագիրը, որի նպատակն է, օգտագործելով Ամանորը շնորհավորելու բարի ավանդույթը, նամակների (այդ թվում էլեկտրոնային նամակների), բացիկների միջոցով շնորհավորել միմյանց՝ նոր կապեր հաստատելով Սփյուռքում եւ Հայաստանում, հատկապես Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում ապրող հայ երիտասարդների միջեւ։

**Սփյուռքում բնակվող հարգելի հայրենակիցներ, սիրելի ընկերներ**

Խնդրում ենք մինչ դեկտեմբերի 25-ը ուղարկել մեզ (Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Տերյան փողոց 69, 4-րդ հարկ, ինդեքս՝ 0009 կամ mynewfriend2014@yahoo.com էլ. հասցեին) Ձեր ամանորյա շնորհավորանքը (էլեկտրոնային նամակի կամ բացիկի տեսքով), որոնք կփոխանցենք Երեւանի եւ հատկապես Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի երիտասարդներին, հայոց բանակի զինծառայողներին։

Տեղեկացնենք, որ նախորդ տարի ստացել ենք նամակներ ավելի քան 13 երկրից։ Ծրագրի շրջանակներում Հայաստանի եւ Սփյուռքի երիտասարդների միջեւ ձեւավորվել են ընկերական կապեր, եղել են փոխադարձ այցելություններ, ձեւավորվել է չորս հայկական ընտանիք։

Անհամբեր սպասում ենք ձեր նամակներին եւ շնորհավորական բացիկներին։

ՀՀԿ ԵԿԱ խորհուրդ

## Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 12:00–ին ՀՀ Շիրակի մարզի Մ. Մանթաշի գյուղապետարանում տեղի կունենան քաղաքացի Գ. Գաբոյանին պատկանող Շիրակի մարզի գ. Մ. Մանթաշ 19-րդ փողոց թիվ 19 հասցեում նախատեսվող ԱԳԼՃԿ-ի նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ։ Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան, Կոմիտաս 29 հասցեում։ Հեռ. 22-14-85

**Սրբագրում եւ խմբագրում**
**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**
**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով։ Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ներսիսյան նրբանցք, շենքի 7, թիվ 45 հասցեում գտնվող 76.4 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 17740000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Մ. Բաղրամյան 12 շենք, թիվ 9 հասցեում գտնվող 69.81ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 5100000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, Չարենց համայնք, 6-րդ փողոց, թիվ 64/1 հասցեում գտնվող 127.2 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0.0209 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 12720000 ՀՀ դրամ։
- ՀՀ, ք. Երեւան, Ավան համայնք, Դուրյան թաղամաս 29 շենք թիվ 9 հասցեում գտնվող 87.1 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 24680000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ, Ջախափնյակ 26Բ շենք, թիվ 14 հասցեում գտնվող 78.8 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 8440000 ՀՀ դրամ։
- ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ համայնք, Բագրատունյաց փողոց, 13 շենք, թիվ 109 հասցեում գտնվող 58.0 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 15700000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ալավերդյան 10, թիվ 17 հասցեում գտնվող 64.0 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 6100000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զովունի, 12-րդ փողոց, թիվ 28 հասցեում գտնվող 100.5 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0.06 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 8580000 ՀՀ դրամ։
- ՀՀ, ք. Երեւան, Նորք-Մարաշ, Նորք 6-րդ փողոց թիվ 15/1 հասցեում գտնվող 146.5 ք.մ մակերեսով բնակելի տուն (առկա է ինքնակամ կառուցված 37.5 ք.մ. կցակառույց եւ 14.9 ք.մ. մակերեսով օժանդակ շինություն) եւ 0.024836 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 25890000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շահումյան փողոց 2-րդ նրբանցք, թիվ 26 հասցեում գտնվող 186.08 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 38.45 ք.մ. մակերեսով ավտոտնակ եւ 0.0415 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 14280000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Խորենացու փողոց, թիվ 3 հասցեում գտնվող 321.96 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 4.0 ք.մ. մակերեսով փուռ եւ 0.1670 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 10660000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Իսակովի փող., 3-րդ նրբանցք, թիվ 1 հասցեում գտնվող 152.0 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 60.4 ք.մ. մակերեսով գոմ, 5.5 ք.մ. մակերեսով կաթսայատուն եւ 0.1553 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 9325000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, գյուղ Կեչուտ 51 շենք, թիվ 3 հասցեում գտնվող 186.7 ք.մ. մակերեսով բնակարան։ Լոտի մեկնարկային գինը՝ 20290000 ՀՀ դրամ։
- ՀՀ, ք. Երեւան, Էրեբունի համայնք, Նոր Արեշ 41 փողոց, թիվ 74/1 հասցեում գտնվող 134.0 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0.014865 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 18280000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 5-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող 126.20 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 43.20 ք.մ. մակերեսով մառան եւ 0.0676 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 14820000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ հասցեում գտնվող 0.124 հա մակերեսով պտղատու այգի։ Լոտի մեկնարկային գինը՝ 3890000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, Նաիրյան փողոց, թիվ 44 հասցեում գտնվող 103.53 ք.մ. մակերեսով առանձնատուն, 2.3 ք.մ. մակերեսով կաթսայատուն, 25.52 ք.մ. մակերեսով ավտոտնակ եւ 0.0408 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 9400000 ՀՀ դրամ։
- ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Ջրառատ թաղամաս, թիվ 436 հասցեում գտնվող 143.69 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 16.8 ք.մ. մակերեսով գոմ, 18.06 ք.մ. մակերեսով հացատուն, 6.3 ք.մ. մակերեսով սանհանգույց, 6.3 ք.մ. մակերեսով սանհանգույց եւ 0.122 հա մակերեսով հողամաս։ Լոտի մեկնարկային գինը՝ 9380000 ՀՀ դրամ։

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են։

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 26.12.2013.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով։ Աճուրդի ավարտը՝ 27.01.2014թ.։ Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն։ Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին)։ Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական։

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը։ Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից։ Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած։ Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ։ Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով։ Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե։ Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը։

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47։ Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.։
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան։ Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 10.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2։